

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

Մարզիկ

ՄՃԼԵ ՐԵՅԻՆԵ ՏԻԻԵՐԵ  
ՏՎԵՐԻՄԵՆ ՅԵՐՈՒՄ

marzig

SPORTS MAGAZINE

32ԴԻ ՏԱՐԻ, 2013, ԹԻԻ 10 (376) - VOL. XXXII N° 10

ՎՍԵՆԵ ԹՅՈՒՆԻ ԵՎ ԹՅՈՒՆԻ 10 - ՎՍԵՆԵ ԹՅՈՒՆԻ 10



95

ԱՄԵՆԱԿ

Հ.Մ.Ը.Մ. ՀԱԼԵՊ





## ԵՂԲ. ՎԱՐԴԱՆ ԲԱՍՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*Թղթակից  
ԵՐԵՒԱՆ*

**Յ.**Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Խմբապետական Խորհուրդը որոշեց միալորել յիշարժան երկու օրեր (Դեկտեմբեր 2, 16) ու համահայաստանեան ծրագիր անցկացնել Դեկտեմբերի 15-ին, Արմաւիրում: Ծրագրի շրջանակներում սկաուտները նախ այցելեցին Եռաբլուր, ծաղիկներ դրեցին եղբ. Վարդանի շիրիմին ու շարունակեցին ծանապարհը դէպի եղբ. Վարդանի ծննդավայրը՝ Արմաւիր:

Իր անունը կրող թիւ 2 դպրոցում կազմակերպուեց հանդիպում Վարդանի հարազատների, ընկերների եւ ուսուցչի հետ, որին յաջորդեց Հայաստանում սկաուտութեան վերահիմնադրութեան 24-րդ տարեդարձին նուիրուած ծրագիրը:

Իրենց հերթին, Դեկտեմբերի 16-ին Եռաբլուր այցելեցին Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կենտրոնական Վարչութեան եւ Խըմբապետական Խորհուրդի ներկայացուցիչները՝ խնկարկելով եղբօր յիշատակը:



**12** Հոկտեմբերին մայրաքաղաք Երեւանը տօնեց իր հիմնադրման 2795-ամեակը: Իրական տօնի վերածուած օրը մեկնարկեց շքերթով, որին մասնակից դարձան աւելի Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը: Սկաուտները մեծ ոգևորութեամբ առաջնորդեցին դէպի հրապարակ շտապող մարդկանց հոծ բազմութիւնը:



Տիրող ջերմ եւ անմիջական մթնոլորտը խօսուն վկայութիւնն էր այն իրականութեան, որ հայ հասարակութիւնը սիրում ու հպարտանում է իր մայրաքաղաքով:

## ՀԱՅԵԱՅՔ ԱՊԱԳԱՅԻՆ

Աւարտին մօտեցաւ Հայաստան երիտասարդական հիմնադրամի նախաձեռնութեամբ անցկացուած երիտասարդական կազմակերպութիւնների ցուցահանդէս-համաժողովը:



Ցուցահանդէսին Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը ներկայացրեց իր տաղաւարը, որն ունեցաւ այցելուների մեծ բազմութիւն: Իննսունհինգամեայ պատմութիւն ունեցող կազմակերպութիւնը արժանացաւ լայն ուշադրութեան: Ներկաները ողջունեցին Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ծաւալած հայրենանուէր գործունէութիւնը:

## ՄԱՀԱԶԳ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ «Արտակարգ» շքանշանակիր ԵՂԲ. ԱՌԱՔԵԼ ԹԵՐԶԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ 6 Դեկտեմբեր 2013-ին, Հալէպի մէջ:




Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





# Թիւիւն հիւն երը

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزىك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهوستمن الرياضى



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

32ՐԴ ՏԱՐԻ, 2013, ԹԻՒ 10 (376)

**ԽՄԲԱԳԻՐ**  
 Վիգէն Աւագեան

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ**  
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),  
 Սեդա Պէշեան-Սաղապարեան,  
 Սարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.  
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան  
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան  
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ  
 Յովհաննիսեան (Հայաստան)

**ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ**  
 Պատրիկ Կիւլպէնկեան  
 Գրիգորիս Պողարեան  
 Աբօ Մոսիկեան

Էջադրում - Արշօ Պալեան  
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ**  
 Պուրժ Համուտ, ճինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

**ՑՐԻՈՒՄ**

Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 4000 Լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ճշդուած է 48000 Լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$70,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):




**Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ**

- Խմբագրական 2
- Պատգամ 3
- Տեսակցութիւն 6
- Պատմութիւն 9
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 13
- Մեր Կորուստները 34



**ԲԱԺԻՆՆԵՐ**

- Սիջազգային 12
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40







Խ  
Մ  
Բ  
Ա  
Գ  
Ր  
Ն  
Ա  
Կ  
Ն

# ՀՈԳԱՏԱՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ

(95-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԷՑ ՍԵՐՈՒՆԴԷՆ)

**Ա**մեն միութիւն նախ պէտք ունի ժառանգութիւն ըստեղծողներու, ապա՝ ժառանգութիւնը պահողներու եւ անոր վրայ նոր բան աւելցնողներու: Ժառանգութիւնը, միութեան մը պարագային, բարոյական-միութենական այն արժէքներն են, գործի եւ վաստակի տարիներու այն գումարն է, որ միութիւն մը միութիւն կը դարձնէ, անոր ինքրորոյն նկարագիր եւ դիմագիծ կու տայ:

Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակի մեր ակնկալութիւններու շարքին, միութեան կրտսեր եւ միջին սերունդներուն անդրադառնալէ ետք, կարգը հասած է երեք սերունդին՝ Հ.Մ.Ը.Մ.ական ժառանգութիւն ստեղծած եղբայրներուն եւ քոյրերուն, որոնք տասնամեակներու ծառայութենէ ետք՝ այժմ հրապարակի վրայ չեն, սակայն արժանի են յատուկ ուշադրութեան եւ գնահատանքի:

Կար ժամանակ, երբ երեք սերունդի այս ներկայացուցիչները իրենց հաւատքին զօրութեամբ եւ միութենական գիտակցութեամբ, գիշերը ցերեկին խառնած՝ անկարելին կարելի կը դարձնէին Հ.Մ.Ը.Մ.ական գործը յառաջ տանելու համար:

Կար ժամանակ, երբ նոյն սերունդի ներկայացուցիչները հանգիստ, ժամանակ եւ հաճոյք կը զոհէին, իրենց ժողովորդի ծառայութիւնը կեանքի նպատակ դարձուցած: Անոնք հաւաքական շահը կը նկատէին անձնական շահերէ գերիվեր, հաւաքական նպատակներն ու նախաձեռնութիւնները՝ սեփականէն առաջնահերթ:

Այսօր, սպիտակահեր այդ եղբայրներու եւ քոյրերու նուիրումի պատրաս-

տակամութենէն բան չէ պակասած, սակայն տարիքի բերումով անոնք այլեւս չեն ցուցաբերեր իրենց անցեալի կենսունակութիւնն ու աշխուժութիւնը: Կան նաեւ անոնք, որոնք պահած ըլլալով երբեմնի իրենց կորովն ու եռանդը, դրօշարշաւի տրամաբանութեամբ, իրենց տեղերը զիջած են աւելի երիտասարդներու: Ինչ ալ ըլլան պարագաները, սակայն, ամէն ինչ աւարտած չէ այս սերունդին համար:

95-ամեայ Հ.Մ.Ը.Մ.ը կ'ակնկալէ, որ միութեան երեք սերունդի ներկայացուցիչները իրենց շուքը անպակաս ընեն մեր ներկայէն եւ տարիներու քրտինքով շահած իրենց փորձառութենէն չզրկեն նորերը, որոնց՝ գործին հանդէպ ունեցած խանդավառութիւնը առանձին կրնայ բաւարար չըլլալ նոր իրագործումներ արձանագրելու համար:

Երեցներու հոգատար ներկայութիւնը շատ բան կրնայ թելադրել նորերուն: Անոնց խստաբիբ ու պահանջկոտ մօտեցումները կրնան զգաստացնել նպատակասլաց գործէ տկարացողներն ու խուսափողները: Միութենական արժէքներ կրողներու դիմաց, նորերը կը պարտաւորուին հազար հաշի կատարել՝ նախքան միութենական ժառանգութիւն մը մսխելը կամ արհամարհելը:

Երեցները ակնածանք կը պարտադրեն նորերուն եւ կը մնան օրինակելի՝ տարիներու իրենց զոհաբերութեան գումարով եւ հաւատքով:

Երեցները մեր պատմութիւնն են, հետեւաբար՝ մեր հպարտութիւնը, անոնց ներկայութիւնը մեր մօտ, մեր մէջ, աւելի քան երբեք անհրաժեշտութիւն է, այսօր եւ մի՛շտ:



# Հ.Մ.Ը.Մ.՝ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԳԻԾԻ, ՆԿԱՐԱԳԻՐԻ ԵՒ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ՊԱՀԱՊԱՆԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՄԻՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ, ՍԻՏՆԻԻ ՄԷՋ)

**Ժ**ողովուրդներու պատմութեան մէջ հազուագիւտ են մարզական այն միութիւնները, որոնք 95 տարի գոյատեւած են իրենց հիմնական առաքելութեամբ:

Մանաւանդ մեր օրերուն, երբ մարզական միութիւնները, քիչ բացառութեամբ, վերածուած են գործարար ընկերութիւններու, իսկ մարզիկները՝ վճարովի արհեստաւորներու:

Մեզի նման փոքր ու աշխարհի տարածքին սփռուած ժողովուրդի մը համար, հրաշքի հաւասար բան է 95 տարի մարզական միութիւն մը պահելը եւ թիւով ու որակով տեւաբար յառաջդիմելը: Իսկ այդ հրաշքը մենք կը պարտինք մեր սքանչելի ժողովուրդին, որուն համար Հ.Մ.Ը.Մ.ը եղած է ու կը մնայ սերունդներու փրկութեան լաստը, մարզական առողջ միջավայրը, սկաուտական ազնիւ սկզբունքներու դարբնոցը, մէկ խօսքով՝ մարզակերտումի եզակի կեդրոնը:

Մարզանքն ու սկաուտութիւնը որպէս միջոց ունենալով, Հ.Մ.Ը.Մ. 95 տարի շարունակ իրեն դիմող սերունդներուն փոխանցեց ինքնավստահութիւն, արժանապատուութեան զգացում եւ ազգային պատկանելիութեան գիտակցութիւն, այլ խօսքով՝ այն հայկականութեան ազգային կնիքով դրոշմեց երիտասարդ սերունդներ, Հ.Մ.Ը.Մ.ը դարձնելով համազարդութեային եւ համահայկական մեծ ընտանիք, կամուրջ՝ գաղութէ գաղութ եւ գաղութներէ հայրենիք:

Հ.Մ.Ը.Մ.ի կամրջող միութիւն մը ըլլալու փաստը կու տան համահայկական անոր նախաձեռնութիւնները, որոնք կ'իրագործուին մեծ յաջողութեամբ: Արդարեւ, վեց ամիս առաջ, միութիւնը կիպրոսի մէջ կատարեց միջ-վարչական դիւաններու իր 8-րդ խորհրդաժողովը, միութեան դրօշին տակ համախմբելով աշխարհասփիւռ կառոյցի իր պատասխանատուները: Յուլիսին, Երեւանի մէջ փայլուն յաջողութեամբ իրագործուեցան համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերը, որոնք այս անգամ քով-քովի բերին միութեան մարզական



թեւին ներկայացուցիչները: Ամիս մը ետք, Օգոստոսին, Թորոնթոյի մէջ կազմակերպուեցաւ միջ-ցամաքամասային խմբապետական վերաորակաւորման դասընթացք, որուն մասնակցեցան Ամերիկեան ցամաքամասէն 45 խմբապետ-խմբապետուհիներ:

2014-ի ամրան կ'իրագործուի համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումը, ուր Արագածի լանջին սկաուտներ յիշատակելի 10 օրեր կ'անցընեն ազգային-միութենական դաստիարակութեան խանդավառ մթնոլորտի մէջ: Այսպէս, Հ.Մ.Ը.Մ. կը շարունակէ 95-ամեայ երթը, իր մասնակցութիւնը բերելով նաեւ Հայկական Յեղասպանութեան 100-ամեակի պատրաստութիւններուն, թէ՛ համահայկական կեդրոնական մարմնին իր անդամակցութեամբ եւ թէ՛ գաղութներու մէջ տեղական մարմիններու աշխատանքներուն սատար կանգնելով:

95-ամեակի տարին է 2013 թուականը: 95-ամեակը առիթ է բոլորիս համար, պարտականութեան հրաւէր մեզմէ իւրաքանչիւրին, Հ.Մ.Ը.Մ.ի ծառայութեան մեր ուխտը վերանորոգելու, որովհետեւ մենք կը հաւատանք որ մրցակցութեամբ լեցուն այս աշխարհին մէջ, միշտ պէտք է պատրաստ ըլլալ Ֆի-



գիրքապէս եւ հոգեպէս, տոկալու եւ պայքարելու:

Բարձրանալու եւ բարձրացնելու:

Կարելի չէ տօնակատարութեան մը խօսքի սահմաններուն մէջ տալ գումարը 95 տարիներու զոհողութեան, հաշիւը անսակարկ նուիրումին եւ տալ հարազատ պատկերը միութեան մը, որ ծնաւ հայ ժողովուրդի ծոցէն, հայ ժողովուրդին եւ Հայաստանին ծառայելու անվերջ ուխտով:

Արդարեւ, խումբ մը գաղափարապաշտ անձերու շնորհիւ, 16 Նոյեմբեր 1918-ին, Պոլսոյ մէջ, հիմնուեցաւ հրաշագործ այս միութիւնը, որ կոչուեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն, կրճատուած չորս տառերով՝ Հ.Մ.Ը.Մ.:

Հ.Մ.Ը.Մ.: Խորհրդաւոր այս չորս տառերուն մէջ խտացուեցաւ հայ ժողովուրդի վերջին մնացորդացի հայապահպանման պատմութիւնը: Իր յաջողութիւններով եւ նուաճումներով Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը այսօր մաս կը կազմէ հայոց պատմութեան վերջին մէկ դարու պատմութեան:

Հ.Մ.Ը.Մ., իր սկզբնական շրջանին, գրադեցաւ առաւելաբար որբախնամ գործունէութեամբ, քան մարզական եւ սկստական աշխատանքներով:

Հո՛ւս է արդէն Հ.Մ.Ը.Մ-ի մեծութիւնը: Հո՛ւս, այս երեւոյթին մէջ կը կայանայ Հ.Մ.Ը.Մ-ի յարատեւման գաղտնիքը, հաւատոյ հանգանակը, որուն հաւատարիմ մնաց Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութենէն մինչեւ մեր օրերը:

Կարդալով Հ.Մ.Ը.Մ-ի պատմութիւնը, մենք մեզի յաճախ հարց կու տանք, թէ՛

Ի՞նչ պիտի ըլլար ապագան ջարդէն հրաշքով փրկուած հազարաւոր այն պատանիներուն, որոնք սկսած էին կեդրոնանալ Պոլիս, եթէ Հ.Մ.Ը.Մ. չհաւաքէր զանոնք որբանոցներու մէջ եւ չզբաղէր անոնց հոգեկան եւ ֆիզիքական կրթութեամբ:

Ի՞նչ պիտի ըլլար ճակատագիրը Ալեքսանդրապոլի աւելի քան 20.000-ի հասնող հայ որբերուն, եթէ Հ.Մ.Ը.Մ. օգնութեան ձեռք չ'երկարէր նորաստեղծ Հայաստանին, առաքելով երեք նուիրեալ եղբայրներ՝ Վահան Զերազ, Տիգրան Խոյեան եւ Օննիկ Եագմաճեան:

Վերջապէս, ի՞նչ պիտի ըլլար դիմագիծը Միջին Արեւելքի, Եւրոպայի, Ամերիկայի եւ Աւստրալիոյ մէջ հասակ նետած հայ երիտասարդութեան, եթէ Հ.Մ.Ը.Մ. ամէն տեղ չհիմնէր Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղեր:

Իսկ ինչո՞վ տարբեր է Հ.Մ.Ը.Մ-ի ներկան իր անցեալէն:

Ազատ ու անկախ հանրապետութիւն է այսօր մեր Հայրենիքը: Եւ հոն Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը գործօն ներկայութիւն է սկստական խումբերով:

Անկախ հայրենիքի մը գոյութիւնը այսօր ուժ եւ կենսունակութիւն կու տայ Հ.Մ.Ը.Մ-ին:

Հայրենիքին ու ազգին ծառայութիւնն է, որ կը պահէ եւ կը յուսադրէ Հ.Մ.Ը.Մ-ը, ապագային, իր վախճանական նպատակին ճամբուն վրայ գայն դարձնելով ստեղծագործ, մեծագործ:

Հոգեկան հայրենիքի հոգեվիճակը յաղթահարուած է այլեւս: Կայ ապրող ու զարգացող իրական հայրենիքը, ուր

Հ.Մ.Ը.Մ. կը գործէ 24 տարիէ ի վեր, սկստական ծառայուն գործունէութեամբ: Պէտք է գուրգուրալ հայրենի սկստական շարքերուն վրայ, որովհետեւ եթէ անոնք զօրանան, ամբողջ կազմակերպութիւնը կը զօրանայ, հայրենիքը կը զօրանայ:

Հայոց աշխարհի թանկագին մասնիկներ են նաեւ Արցախն ու Զաւախքը, որոնք այսօր, աւելի քան երբեք, կարօտ են Հ.Մ.Ը.Մ-ական ուշադրութեան, սիրոյ, հաւատքի եւ կազմակերպութեան: Զոյգ շրջաններուն մէջ ալ Հ.Մ.Ը.Մ. գործունէութեան լայն դաշտեր ունի իր դիմաց, նորահաս սերունդներու դաստիարակութեան ճամբով ծառայելու ազգային իտէալներու կենսագործման:

Եւ դեռ, ի՞նչպէս մոռնալ հայոց աշխարհէն հեռու ապրող, սակայն հայոց աշխարհի կարօտով ապրող սփիւռքեան մեր գաղութները, ուր Հ.Մ.Ը.Մ. տասնամեակներէ ի վեր կը գործէ յարատեւ վերելքով եւ տեւական իրագործումներով:

Մեծ է Հ.Մ.Ը.Մ-ի դերը սփիւռքեան սերունդներու հայեցի դաստիարակութեան գործին մէջ: Գործ մը, որ հետզհետէ աւելի մեծ դժուարութիւններու կը բախի՝ այլասերման եւ ձուլման պայմաններու բերումով:

95-ամեայ Հ.Մ.Ը.Մ-ը յուսահատիլ չի գիտեր սակայն: Ան կը փորձէ դէմ դնել բոլոր տեսակի դժուար պայմաններու: Միութեան վերջին երկու Պատգամաւորական ժողովները հունի մէջ դրած են Հ.Մ.Ը.Մ-ի ռազմավարական ծրագիրը, որ կը նպատակադրէ լուծումներ գտնել միութեան դէմ ցցուած այսօրուան եւ վաղուան դժուարութիւններուն, աւելի արդիական, աւելի հզօր եւ աւելի ժամանակակից գործունէութեան մը հեռանկարով:

Հ.Մ.Ը.Մ-ի ռազմավարական ծրագիրը լայն տեղ կու տայ այսօրուան երիտասարդութիւնը ներգրաւելու ճիգերուն եւ յատուկ կարեւորութեամբ կ'անդրադառնայ միութենական գործունէութեան մէջ արդի արհեստագիտութեան միջոցներու օգտագործման: Ծրագիրը ունի նաեւ յստակ պատկերացում՝ մարզական եւ սկստական գործունէութեան աշխուժացման համար: Ծրագիրը ընթացքի մէջ է եւ հանգրուան առ հանգրուան կը խոստանայ մինչեւ 100-ամեակ նոր ուժականութիւն տալ Հ.Մ.Ը.Մ-ին, որպէսզի ան աւելի զօրանայ, աւելի տարածուի եւ կազմակերպուի հոն ուր ներկայ է արդէն, իսկ ներկայ ըլլայ հոն ուր բացակայ է այժմ, որովհետեւ 95-ամեայ իր առաքելութեան հաւատարիմ՝ ան կոչուած է ազգային դիմագիծի, նկարագիրի, ինքնութեան եւ արժէքներու պահապանը ըլլալու մեր նոր սերունդին համար:

Հ.Մ.Ը.Մ-ի յաջողութեան գաղտնիքներէն է միութեան բարոյական դրամագլուխը, տարիներու վարկը, անունը, որոնց տոկոսներն են որ կու գան խտացնելու մեր շարքերը: Այլ խօսքով անոնք որոնք անցան միութեան շարքերէն, իրենց զաւակները կը զրկեն համոզուած, որ անոնք եւս կը զարգացնեն այդ պատկանելիութիւնը: Փաստօրէն, Հ.Մ.Ը.Մ. հայկական միակ կազմակերպութիւնն է, ուր թոռնիկը, հայրն ու մեծ հայրը միաժամանակ կ'անդամակցին միութեան: Երեք սերունդ «եղբայր» են Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ:

Համակիրներ չեն ծածկեր իրենց խոր համոզումը, որ



Հ.Մ.Լ.Մ. սոսկ մարզական կամ սկաուտական շարժում մը եղած չէ ու պիտի չըլլայ: Հանրային իմաստով յանձնառութիւն զարգացնող, ազգային առումով ինքնաճանաչում սերմանող եւ գաղափարական խորքով նուիրում ջամբող ընտանիք է Հ.Մ.Լ.Մ-ը, որ տարիներու իր հարուստ փորձառութեամբ արժանացած է իր ժողովուրդին հոգածութեան եւ վստահութեան:

Հետեւաբար, վա՛յ մեզի, որ միութիւն ըլլալու փոխարէն, դառնանք ակումբ՝ «քլապ»:

Վայ մեզի, որ խմբապետ նշանակելու համար ստիպուինք ամիսներով մարդ փնտռել:

Հ.Մ.Լ.Մ-ի ծրագիրը ծանօթ է ամէն հայու: «Առողջ միտք, առողջ մարմինի մէջ» նշանաբանէն մեկնելով Հ.Մ.Լ.Մ. իր անդամներուն կը պատգամէ հաւատարիմ ըլլալ հայ ժողովուրդին, ծառայել ազգին եւ հայրենիքին: Աւելի գեղեցիկ պատգամ դժուար է երեւակայել:

Մեզի համար, Հ.Մ.Լ.Մ-ականը է՛ եւ կը մնայ գաղափարական մարդ, երբ յանձն կ'առնէ քալել Եռագոյն դրօշին ետեւէն, իբրեւ ներկայացուցիչը հաւատաւոր հայ երիտասարդութեան:

Հ.Մ.Լ.Մ-ականը է՛ եւ կը մնայ առաքինի մարդ, երբ միութեան եւ ժողովուրդին շահերը կը դասէ իր անձնական հաշիւներէն եւ նախասիրութիւններէն վեր, իբրեւ օրինակ նուիրումի եւ անշահախնդիր գործի:

Հ.Մ.Լ.Մ-ականը է՛ եւ կը մնայ կարգապահ մարդիկ, խո-

նարհ սկաուտ եւ նուիրեալ աշխատող, երբ իր արժէքը կը տեսնէ Հ.Մ.Լ.Մ-ի յաւելեալ հզօրացման եւ հայ ժողովուրդի յառաջդիմութեան մէջ, ի խնդիր՝ հաւաքական մեր ուժին ամրապնդման եւ վախճանական մեր նպատակներուն իրականացման:

Այսպէս, առանց ազգային գիտակցութեան, առանց կարգապահ ու նուիրեալ շարքերու, առանց Ֆիզիքապէս ու հոգեպէս տոկուն Հ.Մ.Լ.Մ-ական երիտասարդութեան կարելի չէ հզօր ու բարգաւաճ ապագայ մը ունենալ: Ու եթէ բախտաւոր օր մը հայութեան պանծալի դրօշը պիտի ծածանի բռնագրաւեալ մեր հայրենիքի երկնակամարին վրայ, այդ կը պահանջէ կամք, լաւագոյնին ձգտելու ճիգ եւ յարատեւութիւն:

Մենք այս հաստատ համոզումով կ'ողջունենք Հ.Մ.Լ.Մ-ի 95-ամեակը, խոստանալով միշտ բարձր պահել այն դրօշը, որ մեզի աւանդ ձգուեցաւ միութեան աննման հիմնադիրներուն կողմէ:

Այն դրօշը, զոր 95 տարի բարձր բռնեցին «հսկայ նուիրման... կամաւոր բանակ»ի հաւատաւոր անդամները:

Այն դրօշը, որ այսօր կը ծածանի Երեւանի ու Արցախի վերեւ, իսկ վաղը, պայծա՛ռ ապագային, պիտի ծածանի նաեւ Վանի, Մուշի, Սասունի, Կարսի եւ Արտասանի վրայ:

Կեցցէ՛ Հ.Մ.Լ.Մ-ը:

Կեցցէ՛ Հ.Մ.Լ.Մ-ը ծնող մեր ժողովուրդը:

Եւ կեցցէ՛ Հ.Մ.Լ.Մ-ի 95-ամեայ երթին մնայուն փարոսը հանդիսացող Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանը:

*'Made from one single slice of natural Australian opal'*



# Classique

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia

Phone: +61 2 9290 2199

fax: +61 2 9262 1630

Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)

Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Հարցազրույցը վարեց՝ Նանկ Աւագեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**-Ի՞նչ առանձնայատկութիւններ ունի ռազմավարական ծրագիրը:**

Վ.Դ.- Ռազմավարական ծրագիրը բաղկացած է 11 կէտերից, որոնք ամբողջութեամբ ամփոփում են մեր աշխատանքները: Ծրագիրն առանձին բաժիններով անդրադառնում է Հ.Մ.Ը.Մ.Ի միութենական աշխատանքների արժեւորման նոր մեթոտների որդեգրմանը, հայոց լեզուի գործածութեանը զարկ տալու միջոցներին, աշխարհասփիւռ երիտասարդութեանը հասանելի դառնալու ձեւերին եւ այլն: Ծրագրում մեծ տեղ է յատկացուած կազմակերպչական աշխատանքներին, օրինակ՝ առցանց հաղորդակցութեանը, տուեալների եւ տեղեկութիւնների հասանելիութեանն առցանց տարբերակով: Այս բոլոր հարցերը լուծուելու են տեղեկատուական նոր արհեստագիտութիւններու միջոցով: Մեկնարկելու ենք մի քանի փորձնական ծրագրեր, որոնց միջոցով կը տեսնենք, թէ ի՞նչ արդիւնքներ ենք ունենում, ի՞նչ սխալներ եւ բացթողումներ եւ կը կատարենք համապատասխան ուղղումներ, մինչ ծրագրերի ամբողջական թողարկումը: Սա հսկայածաւալ աշխատանք է, որտեղ առաջին քայլը համադրելն է՝ նկատի ունենալով աշխարհի տարբեր երկրներում մեր մասնաճիւղերի պահանջները, որ իրարից տարբերում են, սակայն բոլորիս նպատակը նոյնն է: Կարեւորագոյն խնդիրներից է հայերէն լեզուի օգտագործումը հասցնել առաւելագոյն մակարդակի, որ շատ



Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը (Հ.Մ.Ը.Մ.) 2018 թ.ին կը նշի ստեղծման հարիւրամեակը: 1918 թուականին հիմնադրուելով Կոստանդնուպոլսում, որպէս հայկական մարզական եւ սկաուտական կազմակերպութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի նպատակն էր. «Ֆիզիքական առողջ դաստիարակութիւն տալ հայ անհատին՝ համակելով նրա միտքն ու սիրտը մարզական ազնուագոյն ոգով: Սովորեցնել նրան՝ լինել աշխատասէր, արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ, զարգացնել նրա մէջ պարտականութեան, պատասխանատուութեան եւ պատուի զգացումները, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգին»: Հ.Մ.Ը.Մ.ի այս նպատակին այնուհետեւ միահիւսուեց նաեւ Սփիւռքում հայապահպանման եւ հայ մանուկներին ու երիտասարդներին ազգային շուրջ համախմբելու բարձր առաքելութիւնը:

Տասնամեակներ շարունակ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնն անշեղօրէն իրականացրել է իր նպատակները՝ շնորհիւ նուիրեալների, ովքեր «Բարձրացի՛ր-բարձրացրու» նշանաբանով, սերնդէ սերունդ ստանձնել են այս կարեւոր եւ խիստ պատասխանատու գործը: Այսօր,

նուազել է: Մեր հիմնական՝ մարզական եւ սկաուտական աշխատանքներում եւս նախատեսուում են աշխատանքի ձեւերի փոփոխութիւններ, միաժամանակ, ունենալու ենք նաեւ մշակութային ծրագրեր:

**- Ի՞նչ մարտահրաւէրներ ունի այսօր Հ.Մ.Ը.Մ.ը:**

Մ.Շ.- Ամենամեծ մարտահրաւէրը՝ Սփիւռքում հային հայ պահելն է, իսկ հայրենիքում՝ դաստիարակել որպէս լաւ քաղաքացի: Այս երկուսը մեր հիմնական նպատակներն են: Այդ իսկ պատճառով ռազմավարական ծրագիրը իր դրոյթներով եւ գործելաոճով եկել է ասելու, որ մենք պէտք է աշխատենք այդ երիտասարդութեան հետ, որն ի տարբերութիւն նախորդ սերունդների, այլեւս չի հետաքրքրում հայկական իրականութեամբ: Փորձում ենք օգտագործել ժամանակակից արհեստագիտութիւնները եւ քայլել ժամանակի հետ, որպէսզի մեր գործունէութիւնը հետաքրքիր լինի նաեւ երիտասարդներին:

Վ.Դ.- Այժմ շատ կարեւորում ենք ընկերային հաղորդակցութեան միջոցները: Օրինակ, Նաւա-



Հ.Մ.Ը.Մ.ն ունի 25 հազար անդամ աշխարհի հինգ մայր ցամաքամասերում գործող իր 104 մասնաձիղերում, որտեղ հայ պատանիները զբաղվում են տարբեր մարզաձեւերով, հայկական միջավայրում հաղորդակցում միմիանց հետ: Միաժամանակ, սկսված տարիներից սկսվելով ներդրում է հայրենասիրական ոգին՝ տարբեր ձեռնարկների, այդ թվում՝ հայագիտական թեմաներին առնչուող գիտաժողովների ու դասախօսությունների միջոցով: Հ.Մ.Ը.Մ.ի յաջողութիւնը պայմանավորված է նաեւ այն հանգամանքով, որ այս միութիւնն ընթանում է ժամանակին համաքայլ՝ պարբերաբար իրականացնելով արդիականացման աշխատանքներ: Այս առումով, շրջադարձային կարելի է համարել 2007թ.ին Հայաստանում կայացած Հ.Մ.Ը.Մ.ի հերթական Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը, որի ժամանակ որոշում կայացուցեց մշակել նոր ռազմավարութիւն, որը պետք է դառնար կազմակերպութեան առաջիկայ տասնամեակների գործունէութեան առանցքը:

Նոյեմբերի 18-ին Փասատենայի Հայ Կենտրոնում, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը հրաւիրել էր շրջանի տարբեր մասնաձիղերի վարչական կազմերի ղեկավարներին՝ ներ-

կայացնելու Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 10-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի ժամանակ հաստատուած եւ արդէն պատրաստ Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրը: Պատրաստման աշխատանքները տեւել են չորս տարի եւ 2011 թ.ին ընդունուելուց յետոյ սկսուել են տեղայնացման փորձնական աշխատանքներ մի շարք ուղղութիւններով: Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրը 130 էջանոց փաստաթուղթ է, որ կարելի է գտնել Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան համացանցի կայք էջում՝ հայերէն եւ անգլերէն լեզուներով:

«Մեր կազմակերպութեան գաղափարախօսութիւնն ու նպատակները հիմնադրման օրուանից չեն փոխուել: Ռազմավարական ծրագիրը համակարգելու է միայն այդ նպատակներին հասնելու ձեւերը՝ արդիականացուած միջոցներով: Այդպէս հնարաւոր կը լինի հասնել մեր գլխաւոր խնդրի լուծմանը՝ հայ պատանիներին ու երիտասարդներին ներգրաւել ազգապահպանման գործում», «Ասպարէզ»-ին տրուած բացառիկ հարցազրոյցում նշեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամներ Վիգէն Դաւթեանը (Մ.Ն.) ու Միհրան Շիմշիրեանը (Լիբանան):

սարգեան խաղերի ժամանակ բոլորը կարող էին առցանց դրուժեամբ տեղեկանալ իրենց խաղերի ժամերի, ծրագրերի, արդիւնքների մասին: Աշխատում ենք առաւելագոյն չափով արդիականացնել մեր մեթոտները եւ դրա միջոցով մեր երիտասարդներին պահել մեր շարքերում:

**- Վերջին տարիներին ի՞նչ միտումներ կան երիտասարդների ներգրաւման առումով:**

Վ.Դ.- Մարզումների ձգողական ուժը շատ մեծ է, մանաւանդ՝ պասքեթպոլի: Մեր մասնաձիղերը մեծ թուով մարզիկներ ունեն: Ծնողները նախընտրում են իրենց զաւակներին ուղարկել Հ.Մ.Ը.Մ., որպէս ապահով վայր: Սովորաբար 18 տարեկանից յետոյ երիտասարդները հեռանում են, սակայն 30-ից յետոյ նորից վերադառնում, մասնաւորապէս, երբ ընտանիք կազմելով երեխայ են ունենում՝ իրենց մանուկներին են բերում: Հիմնականում շարունակականութեան արդիւնքում է ապահովուում մեր շարքերի համայրումը, եւ այսօր 25 հազարից աւելի անդամ ունենք ամբողջ աշխարհում: Միաժամանակ, տարիների ընթացքում վերլուծում եւ կազմում ենք մեր մարզիկների ու սկստիւտների թուերն աւելացնելու այլ ձեւեր:

**- Իսկ ի՞նչպէս էք փորձում հայ պատանիներին գրաւել:**

Վ.Դ.- Միացեալ Նահանգներում մրցակցութիւնն այլ օտար կազմակերպութիւնների ու միութիւնների հետ շատ խիստ է:

Մենք կիրառում ենք տարբեր միջոցներ մեր երեխաներին հայկական միութիւններում ներգրաւելու համար: Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան մարզական խորհուրդը, ամէն տարի Քալիֆորնիայի հայ աշակերտների համար կազմակերպում է ՔԱՀԱՄ անուանումով մրցումներ, որոնք ներառում են պասքեթպոլի, Փուլթպոլի, փինկ-փոնկի, վոլիպոլի, թեթեւ ատլէթի եւ մի շարք այլ մարզաձեւեր: Այս խաղերին մասնակցում են նոյնիսկ ամերիկեան դպրոցներում սովորող հայ աշակերտներ, որոնց մեծամասնութիւնը Հ.Մ.Ը.Մ.ական չեն լինում, սակայն ՔԱՀԱՄ-ի միջոցով նրանք ծանօթանում եւ հետաքրքրւում են մեր միութեամբ եւ շուտով անդամակցում:

Մ.Շ.- Նոյն պատկերն է Լիբանանում: Բոլոր հայ վարժարանների աշակերտները, նաեւ օտար վարժարանների աշակերտները զայիս եւ մասնակցում են ԼԵՎԱՄ-ի ամէնամեայ խաղերին, եւ այդպիսով աճում է նաեւ մեր անդամների թիւը: Ռազմավարական ծրագրի միջոցով այդ ամէնն աւելի կազմակերպուած բնոյթ կը կրի:

Վ.Դ.- Կը ցանկանայի նշել նաեւ Նաւասարդեան խաղերը, որոնք բացի մարզական մրցումներից, տօնական մի քանի օր են պարգեւում մեր համայնքին: Մրցախաղերն ամփոփող փակման հանդիսութիւնների ժամանակ մենք ունենում ենք աւելի քան 20 հազար այցելու, եւ սա եւս մէկ միջոց է Հ.Մ.Ը.Մ.ի մասին տեղեկացնելու:



- Դուք նշեցիք, որ ռազմավարական ծրագիրը կազմելիս հաշուի էք առել իւրաքանչիւր երկրի առանձնայատկութիւնը: Իսկ ի՞նչպէս է արտայայտուելու ձեր գործունէութիւնը Հայաստանում:

Մ.Շ.- Հայաստանում մեր աշխատանքները տարբեր են Սփիւռքից: Հայրենիքում մենք հիմնականում կենտրոնացած ենք սկաուտական աշխատանքների ուղղութեամբ, եւ Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւնը (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը) ճանաչուած է միջազգային սկաուտական գրասենեակի կողմից: Ա.Պ.Հ. երկրների շրջանում, Հայաստանի սկաուտական կազմակերպութիւնն ամենագործունէն ու ընդունուածն է: Միջազգային սկաուտական կազմակերպութեան բոլոր միջոցառումներն այսօր ցանկանում են իրականացնել Հայաստանում, եւ սա մեծ յաջողութիւն ենք համարում:

Հ.Մ.Ը.Մ.ը նուիրեալների միութիւն է, որի յաջողութիւնը այն անհատներն են, որոնք միաւորուելով գաղափարի շուրջ՝ կազմակերպութիւնը դարձրել են համաշխարհային հաշտ ու ներդաշնակ ընտանիք:


- Ովքե՞ր կարող են դառնալ այդ ընտանիքի մաս:



Վ.Գ.- Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը բաց է բոլորի համար, եւ մեզ կարող է անդամակցել իւրաքանչիւր ցանկացող: Չափազանց կարեւորում ենք կամաւորական աշխատանքը, որ մեր գործունէութեան հիմքն է: Մեր ցանկութիւնն է, որ Հ.Մ.Ը.Մ.ի խօսքը տարածուի, որ մեր միութիւնը լինի ապագային ուղղուած հայկական առաջնակարգ կազմակերպութիւն եւ Սփիւռքում, եւ հայրենիքում՝ նպաստելու մա-

նուկների եւ երիտասարդների հայեցի դաստիարակմանը: 95 տարի իրականացրել ենք այդ աշխատանքը՝ յաղթահարելով շատ դժուարութիւններ, սակայն երբեք չենք ընկրկել: Աշխատելու ենք, որ երկրորդ հարիւրամեակը լինի առաւել կազմակերպուած ու արգասաբեր:

Առաջնորդուելով «Նպատակն առանց ծրագրի պարզապէս ցանկութիւն է» կարգախօսով՝ Հ.Մ.Ը.Մ.ը նախագծել է 21-րդ դարի յաւակնոտ մի ծրագիր, որտեղ մանրամասն կերպով ներկայացուած են կազմակերպութեան ապագայ անելիքները: Շեշտը դնելով երիտասարդների եւ պատանիների առողջ դաստիարակութեան վրայ, Հ.Մ.Ը.Մ.ը եւս մէկ անգամ վկայում է, որ նպատակները հիմնաւոր են, կամքը՝ զօրաւոր:



Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon  
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556  
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812  
E-mail: hratch@goldenmountains.com  
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱԲՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ (Բ. ՇՐՋԱՆ, 1931-1940)

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)  
ԱՆՏԻՊ, Ը. ՄԱՍ



էյրութի վարչութեան մտահոգութիւններուն գլխաւոր պատճառները կը կազմեն ակումբի խնդիրը, սկառուտներու եւ անդամներու շուէտական մարզանքի վայրի հարցը: Առաջինին փնտռտուքին հետ, չեն մոռնար երկրորդ հարցին լուծման համար դիմել Ս. Նշան Ազգ. վարժարանի հոգաբարձութեան՝ դպրոցի բակին համար, որ դժուարութեան կը յանգի, կը մերժուի: Կար նաեւ աղէտեալներուն պարագան. կ'որոշուի Պէյրութ-Դամասկոս Ա. խումբերու մրցում մը կազմակերպել ու հասոյթը ամբողջովին յատկացնել աղէտեալներուն: Դամասկոս սիրով կ'ընդառաջէ առաջարկին: Հալէպ, աղէտեալներու օժանդակելու առնչութեամբ, Շրջանային Վարչութեան հրահանգը ստանալուն պէս կը դիմէ Առաջնորդարան: Կը թելադրուի վարչութեան գործի լծուիլ իր կարելի միջոցներով:

Հալէպի վարչութիւնը Յունուար 1933-ին նամակներ կը ստանայ Ալեքսանտրէթէն, Քըրք Խանէն, Անտիոքէն ու Թրիփոլիէն: Առաջին երեքը կ'առաջարկեն Փութպոլի մրցումներ պահեստի եւ սկառուտական խումբերուն հետ, իրենց քաղաքներուն մէջ, նպատակ ունենալով հետաքրքրութիւն եւ շարժում ստեղծել բաղադատաբար լծացած այդ վայրերուն մէջ: Հալէպ, նիւթական գոհողութիւններու գնով, կը ջանայ գոհացում տալ եղած առաջարկներուն, իսկ Թրիփոլիին պահանջած գոյքերը «Հայթայթելը, թէեւ Հալէպի մասնաճիւղին չի պատկանիր», սակայն կ'որոշէ ղրկել «նոյն ատեն տեղեկագրելով Շրջանային Վարչութեան»:

Հալէպ իր նիւթական կարիքներուն գոհացում տալու համար կը պատրաստուի կատարել շարժանկարի երեկոյթ, Մարտի 1933-ին հետ գործակցաբար ներկայացում, պարահանդէս, իսկ ակումբի 20 օսմ. ոսկի վարձքին համար, նուազ սակով կարգադրութեան համար, կը դիմուի Առաջնորդարան, անկէ երուսաղէմ, ու կը մերժուի թորգոմ Պատրիարքին կողմէ, այն առարկութեամբ որ «Ս. Աթոռոյս սոյն պահանջը արդէն մտցուած է իր պիւտճէին մէջ, կը ցաւինք որ ներկայ տնտեսական շատ անձուկ վիճակին մէջ մանաւանդ պիտի չկարենանք դժբախտաբար գոհացում տալ Ձեր խնդրանքին» (Յամար 1756-9, 16 Մարտ 1933):



Հալէպէն, «Ազգակ» օրաթերթի թղթակիցը քաղաքին ազգային կեանքին մասին գրելու ատեն կ'արձանագրէ նաեւ հետեւեալը.

...«Հ.Մ.Ը.Մ-ը Սուրիոյ ամէնէն ժողովրդական կազմակերպութիւնը կը հանդիսանայ եւ որ ենթակայ է համաժողովրդական գուրգուրանքի:


«Ներկայ վարչութիւնը, որ կազմուած է լաւագոյն տարրերէ, լծուած է եռանդուն աշխատանքի եւ իր գործունէութեամբ ան կը ձգտի եւ յաջողեր ալ է արդէն Հ.Մ.Ը.Մ-ը դարձնել իր անուան կատարելապէս արժանի կազմակերպութիւն մը, ընդարձակելով անոր աշխատանքները Փութպոլի մարզադաշտէն աւելի հեռուները եւ աւելի նպատակայարմարը:

«Այս իսկ տեսակէտէն առաջնորդուած Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի վարչութիւնը այսօր արդէն զգեստաւորեր ու կազմակերպեր է 50 սկառուտներ, որոնց պաշտօնական արարողութիւնը կատարեց համաժողովրդական հանդիսաւորութեամբ, քանի մը ամիս առաջ, եւ շուտով պիտի գան միանալ յիսնեակ մը եւս պատանիներ:

«Շրջաններուն մէջ եւս մարմնակրթական գործին զարկ տալու համար առանձին աշխատանքներ կը տանի վարչութիւնը» («Ազգակ», 15 Փետրուար 1933):

Չանչէի մէջ, հակառակ այլ անուններու տակ երիտասարդական նոր միութիւններու կազմութեան՝ տկարացնելու մտօք Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը, հակառակ արդիւնք կու տայ: 1933-ի սկիզբը անդամներու յաւելում արձանագրելէ զատ, կը ստիպուի իր առաջին խումբին կողքին ունենալ նաեւ





Փուլթպոլի երկրորդ խումբը: 1933 Յունուար 12-ի նիստի ատենագրութեան մէջ արձանագրուած է. «Վարչութիւնը նկատի ունենալով տեղւոյս Հ.Մ.Ը.Մ-ի օրէ օր գօրանալը, հայ տղոց խանդավառօրէն դէպի Հ.Մ.Ը.Մ-ի դրօշին դիմելը, որոշեց կրկին անգամ մրցում մը կազմակերպել դէպի Պէյրուսթ, անշուշտ, նկատի ունենալով մրցումներու բարերար ազդեցութիւնը»: Առ ի չգոյժ ընդհանուր կանոնագրի, Զահլէի մասնաճիւղը իր 21 Փետրուար 1933-ի նիստին կ'որոշէ ներքին կանոնագիր մը պատրաստել. կ'ընտրէ յանձնախումբ մը, որուն մաս կը կազմեն՝ Հրանդ Լամպաճեան, Կիրակոս Թապազեան, Միսաք Ունճեան եւ Յարութիւն Փողահարեան:

Թրիփոլի եւս վերելքի մէջ է: Վարչութիւնը զբաղեցնող խնդիրներ են՝ նուազախումբի վերակազմութիւն, թաղականութեան հետ համագործակցաբար ներկայացում, Պէյրուսթի աղէտեալներուն համար հանգանակութիւն: Ասոնց հետ նաեւ ինքնատիպ որոշում մը - ամէն Հինգշաբթի երեկոյեան հաւաքուիլ ակումբ «վիճելու, խնդալու, գուարճանալու պատշաճ կերպով» (Ատենագրութիւն, 27 Յունուար 1933):

«Այս տարիներուն, Դամասկոսի մէջ ծրնունդ առած Փուլթպոլի խումբը օրէ օր դէպի գէնիթ կ'ուղղէ իր յաջողութիւններուն սլաքը: Այն աստիճան որ համարձակութեամբ հրաւէր կը կարդայ Պաղեստինի անգլիացի ոստիկաններու խումբին, որ տիրացած է Պաղեստինի անգլիական ախոյեանական բաժակին եւ խլած է յաղթանակի բազմաթիւ դափնիներ, նոյնիսկ եգիպտական լաւագոյն խումբերէ:

«Խաղը դրուած հովանաւորութեանը ներքեւ անգլիական հիւպատոսին, որ ներկայ կ'ըլլայ իր տիկնոջ հետ, տեղի կ'ունենայ 19 Փետրուար 1933-ին: Օրուան փայլքը կ'աւելցընէ Փրանսական զինուորական նուազախումբը:

«Երբ խաղացողները իրենց յատուկ տեղե-

րը կը գրաւեն դաշտին վրայ, մերիններուն փոքրակազմ, 15-18 տարեկան անհաւասար հասակով խաղացողներուն դէմ կարելի չէր չզմայլիլ անգլիական խումբին, որ բաղկացած էր 25-30 տարեկան, բարձր ու մարզիկի կազմով, համահասակ երիտասարդներէ:

«Խաղը կ'ընթանայ արագ ու հետաքրքրական: Հակառակ անգլիացիներու առաւելութիւններուն, Հ.Մ.Ը.Մ. առաջին կիսախաղին կը նշանակէ իր առաջին կողմը: Իսկ երկրորդ կիսախաղին, բախտի մէկ անախորժ դիպուածով, կատաղի հով մը ծայր կու տայ Հ.Մ.Ը.Մ-ի խումբին դէմ:

«Ան փոշիի ամպեր կը բարձրացնէր դաշտին վրայ, այն աստիճան որ խաղացողները երբեմն, նոյնիսկ, անկարող կ'ըլլային զիրար զանազանելու: Անգլիացիք այս առիթէն օգտուելով երեք կողեր կը նշանակեն: Մեր մարզիկները առանց բարոյալքուելու կը պայքարին պաշտպանելու իրենց բերդը հակառակորդին ու բնութեան ուժերուն դէմ, որու ընթացքին, ընդհանուրին գնահատանքին եւ սքանչացումին կ'արժանանան...» («Ազդակ», 25 Փետրուար 1933):

Հիւսիսային Սուրիոյ մասնաճիւղերը՝ Անտիոք, Ալեքսանտրէթ, Քըրք Խան, Փուլթպոլի իրենց խումբերուն ձեւաւորումէն ետք, ճիգ չեն խնայեր կազմակերպելու նաեւ սկաուտական շարքերը: Այս պարագան, բացի մասնագիտական դժուարութիւններէ, ունէր նաեւ պարենաւորումի դժուարութիւն: Այդ քաղաքները փոքր են, շարժումը՝ նոր, առաջին սկաուտական շարքերն էին որ պիտի պարենաւորուէին, իսկ շուկաները՝ փոքր, ուրեմն գուրկ անհրաժեշտ առարկաներէ: Ասոնց յարմարագոյն հայթայթիչը Հալէպը պիտի ըլլար ու Հալէպի մասնաճիւղի սկաուտ խմբապետ Նշան Թիւյսիւզեանը, որուն կը կատարուէին դիմումները,



1948. Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի ֆուլթպոլի խումբը:



համբերատար ու բարեխղճօրէն պիտի կատարէր եղած ապսպրանքները - հագուստ, փողկապ, գօտի, սուլիչ, գուլպայ, թմբուկ, դրօշակի կերպաս, գլխարկ եւ այլ իրեղէններ:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ եւ Լիբանանի մէջ բացած ալօսը, իր մասնաճիւղերով, խոր է ու լայն: Այս բազմաճիւղ կազմակերպութիւնը, տարածուած հեռաւոր տարածութիւններու վրայ, իր Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու փոխադարձ իրաւասութիւնները ճշգրտող ներքին կանոնագիր մը անհրաժեշտ էր: Փարիզի Պատգամաւորական ժողովը իր հութեամբ ամուլ անցաւ: Անոր վրայ դրուած յոյսերը ի դերեւ ելան: Իւրաքանչիւրը ինքն իր գլխուն ճարին պէտք էր նայէր: Սուրբիոյ եւ Լիբանանի շրջանը պէտք էր մշակէր իր ներքին կանոնագիրը ու ներկայացնէր Պատգամաւորական ժողովին եւ ստանար անոր վաւերացումը: Ուստի, գլուխ հանելու համար այս գործը, Շրջանային Վարչութիւնը 9 Մարտ 1933-ի իր նիստին արձանագրութեան մէջ կը գրէ. «Ներքին կանոնագրի պատրաստութիւնը յանձնուեցաւ Ալպէր Յակոբեանի, Սուրէն Բաբախեանի եւ Խորէն Սուքիասեանի»: Կանոնագրի պատրաստութեան գուզընթաց կար նաեւ մասնաճիւղերու դրօշակներու գոյներուն որոշումը: Պարտականութիւն կը տրուի Ալպէր Յակոբեանին ուսումնասիրելու եւ Շրջանային Վարչութեան ներկայացնելու յարմար գոյները իրենց նմոյշներով:

Շրջանային Վարչութիւնը նկատի առնելով որ Զատկուան միջ-մասնաճիւղային Ֆուլթայոյի ախոյեանական մրցումներուն Հալէպի մէջ խճողում եւ չափազանց զբաղած վիճակ պիտի ստեղծուի, նաեւ նկատելով որ այդ պայմաններուն տակ գումարուելիք Պատգամաւորական ժողովը պիտի չկարենայ «Հարկ եղած լրջութեամբ» հետեւիլ օրակարգի խնդիրներուն, - կանոնագրի քննութեան, դրօշակի գոյներուն», որոշեց Պատգամաւորական ժողովը յետաձգել Յունիսին եւ այս որոշումը շրջաբերականով իմացնել մասնաճիւղերուն (Ատենագրութիւն, 19 Մարտ 1933): Միջ-մասնաճիւղային այս հանդիպումը աւելի շքեղ ու տպաւորիչ դարձնելու գեղեցիկ գաղափարէն մղուած, Շրջանային Վարչութեան հրահանգով, հոն պիտի հաւաքուէին շրջաններու սկաուտական կազմերը: Այս հրահանգին գործադրութիւնը սակայն կարծուածին չափ ալ դիւրին գործ չէր, որքան ալ նպատակը խօսէր բոլոր Հ.Մ.Ը.Մ-ականներու սրտին: Նիւթական մեծ գոհողութիւններու կարօտ այս առաջին փորձը առաւելապէս կախում ունէր Հալէպի մասնաճիւղի կարգադրութիւններէն: Հալէպ իր ձեռներէց ոգիին ու նուիրումին փաստը եկաւ անգամ մը եւս հաստատելու՝ Շրջանային Վարչութեան տեղեկացնելով, թէ «Դուրսէն եկող սկաուտներու տեղաւորումը իրենց Հալէպի եղբայրներուն տունները» ապահովուած է (Ատենագրութիւն, 29 Մարտ 1933):

Մինչ Զատկուան հանդիպումները, Հալէպի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր մասնաճիւղերու խումբերն ալ տեղական



1956. Գահիրէի «Արարատ»ի աղջիկներու խումբը:

մրցումներու կը մասնակցին - փոքր մասնաճիւղերը իրարու հետ, իսկ մեծերը արդէն իրենց գործօն մասնակցութիւնը կը բերեն ախոյեանական մրցումներու, որոնք արժէք կը ներկայացնեն Ֆուլթայոյի շարժման ճամբուն վրայ: Արդարեւ, 1933-ին, «Լիբանանի Ֆուլթայոյի պատմութեան մէջ նոր շրջան մը կը սկսի ախոյեանական մրցումներով, որոնց Հ.Մ.Ը.Մ-ը կը մասնակցի իբրեւ առաջին կարգի խաղացող»: Այս մրցումներուն առաջին հանդիպումը վիճակաձգութեամբ տեղի կ'ունենայ Եռ. էյ. Պէքաա խումբին հետ: «Հանդիսականներուն առաջին տպաւորութիւնը, ի տես Պէքաայի խումբին յաղթանգամ եւ ուժեղ խաղացողներուն, բաղդատաբար Հ.Մ.Ը.Մ-ի կարճիկ հասակներուն, այն եղաւ որ... խաղը վերջացաւ Հ.Մ.Ը.Մ-ի 0-5 ջախջախիչ յաղթանակով» («Ազդակ», 25 Մարտ 1933):

Հոմսի մասնաճիւղը իր անդամական ընդհանուր ժողովը գումարելով, նորընտիր վարչութիւնը Ապրիլ 6-ին կ'ենթարկէ Շրջանային Վարչութեան վաւերացման: Վարչութեան մաս կը կազմեն Լեւոն Քէօսէեան, Հրանդ Թաշճեան, Լեւոն Թորքաճեան, Մեսրոպ Երկաթունի, Պետրոս Դուրեան, Գարեգին Կրելեան եւ Միհրան Աղէկեան: Նոյն թուականին Թրիփոլի մասնաճիւղն ալ իր նորընտիր վարչութեան կազմը կը ներկայացնէ Շրջանային Վարչութեան. Անդրանիկ Անուշեան, Նշան Սարաֆեան, Տիգրան Չալեան, Արամ Չուխատարեան եւ Յակոբ Ներհէկլեան:

Միջ-մասնաճիւղային Զատկուան մրցումներուն նախօրեակին, «Ազդակ»ի Ապրիլ 14-ի համարին մէջ կը կարդանք.

... «Ինչպէս միշտ, այս տարի եւս, Զատկուան օրերուն, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կազմակերպած է իր տասը մասնաճիւղերուն՝ Պէյրութ, Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Զահլէ, Թրիփոլի, Ալէքսանտրէթ, Քրք Խան, Անտիոք եւ Հոմս խումբերուն մրցումները Հալէպի մէջ:

(Շար. 8)





# 2013-Ի ԼԱԻԱԳՈՅՆ ՖՈՒԹԱՊՈՒԼԻՍՏԸ՝ ՔՐԻՍՏՈՒԱՆՕ ՌՈՆԱԼՏՕ

## Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

**Վ**երջին տարիներուն, անկախ ակումբներու սուր մրցակցութենէն, որ կը լարէ գրեթէ բոլոր ֆուտպոլասէրներու ուշադրութիւնը, Պարսա-Ռէալ մրցակցութեան մէջ են նաեւ այլապէս: Պարսալի գերասող Մեսսի առիթը չ'ընծայեր որ Ռէալի եւ Փորթուգալի լաւագոյն մարզիկը յաւակնի աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստի տիտղոսին: Վերջին քանի մը տարիներուն Մեսսի աներեր բազմած է այդ գահին վրայ:

Այս տարի, սակայն, պատկերը կրնայ փոխուիլ: Մեսսի յաճախակի բացակայութիւնը դաշտերէն, ինչպէս նաեւ Պարսալի ոչ այնքան փայլուն արդիւնքները, մասնաւորաբար եւրոպական մրցաշարքերուն, կրնան առիթ տալ այլ մարզիկներու, որ Մեսսին գահընկէց ընեն: Ամէնէն շատ կը խօսուի Ռոնալտոյի մասին, որ Մեսսիին նախորդած էր այս տիտղոսին եւ կրնայ անոր արժանի յաջորդը ըլլալ:

### Ո՞վ է Ռոնալտո:

Փորթուգալցի այս մարզիկը իր երկրի համեստ Նասիոնալին մաս կազմած, ապա Սփորթինկի միացած, ան ուշադրութիւնը կը գրաւէ Մ. Եոննայթրտի փորձառու մարզիչ Ալեքս Ֆերկլըսընի: 2003-ին ան կը միանայ անգլիական կազմին եւ անոր հետ կը մնայ մինչեւ 2008-2009 տարեշրջանը: Այս

միջոցին ան երեք անգամ կը տիրանայ Անգլիոյ ախոյեանութեան, մէկ անգամ՝ Անգլիոյ բաժակին, երկու անգամ՝ Լիկայի բաժակին, մէկ անգամ՝ Անգլիոյ «Սուփըր քափ»ին, մէկ անգամ՝ «Չեմփիընզ լիկ»ին եւ մէկ անգամ ալ ակումբներու աշխարհի ախոյեանի տիտղոսին: Անոր աստղը կը փայլի Անգլիոյ մէջ եւ 2008-ին կ'ընտրուի



աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստը: 2009-ին կը միանայ Սպանիոյ արքայական կազմին՝ Ռէալ Մատրիտին: Սակայն նոյն յաջողութիւնները չի գտներ ան Սպանիոյ մէջ: Պարսալի գերհօր խումբը Մեսսիի առաջնորդութեամբ շուքի մէջ կը ձգէ Ռէալն ու Ռոնալտոն: Ան մէկ անգամ կը տիրանայ Սպանիոյ ախոյեանութեան, մէկ անգամ՝ Սպանիոյ բաժակին եւ մէկ անգամ ալ Սպանիոյ «Սուփըրքափ»ին: Իսկ եւրոպայի մրցաշարքերուն ան չի յաջողիր որեւէ տիտղոսի տիրանալ: Փորթուգալի ազգային խումբին հետ ալ Ռոնալտո տիտղոսներ չէ գրպանած: Ան երեք անգամ մասնակցած է Եւրոպայի ախոյեանութեան եւ երկու անգամ ալ՝ աշխարհի ախոյեանութեան մրցումներուն: Ազգային խումբին հետ կատարած է 109 մրցում եւ նշանակած է 47 կոլ:

Այս բոլորէն անկախ, սակայն, անառարկելի փաստ է, որ առասպելական էօզեպիոյէն ետք, ամէնէն նշանաւոր փորթուգալցի այս մարզիկը փնտռուած մարզիկ է շատ-շատերու կողմէ: Թէ՛ ազգային խումբը եւ թէ՛ Ռէալի կազմը իրենց յաղթանակներուն համար շատ բան կը պարտին այս տոկուն, աշխատասէր եւ յամառօրէն պայքարող ֆուտպոլիստին: Ճիշդ է, Ռոնալտո Մեսսիի նման արուեստագէտ ֆուտպոլիստ չէ, սակայն ան դաշտին մէջ տիրական ներկայութիւն է ամէն տեղ: Օգնող է թէ՛ միջնապահներուն եւ թէ՛ յետսապահներուն: Իսկ կոլ նշանակելու մէջ ան առատածեռն է:

Այս տարեշրջանին լաւագոյն ֆուտպոլիստի տիտղոսին համար, Մեսսիի կողքին, ան կը նկատուի հաւանական թեկնածուն: Ճիշդ է, որ Ֆրանսացի Ռիպերի ինքզինք կը նկատէ արժանի տիտղոսակիր, սակայն ան չունի Ռոնալտոյի դերն ու մակարդակը դաշտերուն վրայ: Ռիպերի կրնայ յաջողութեան հասնիլ եթէ նկատի առնուի տիտղոսակիր ըլլալու անոր պարագան, բան մը որմէ զրկուած է այս տարի Ռոնալտո:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՍՈՒԹԻՒՆ՝ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

## Յովիկ Հապեշեան ՀԱԼԷՊ

Հովանավորությամբ Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ. Խորհուրդին, Կիրակի, 3 Նոյեմբեր 2013-ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակի փառաշուք հանդիսութիւնը տեղի ունեցաւ «Գէորգ Եսայեան» սրահին մէջ, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն եւ շեփորախումբին:

Հանդիսութեան ներկայ էին Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան, ազգային-բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Սուրիոյ Երջանային Վարչութեան եւ Սկաուտ. Խորհուրդի անդամներ:



Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ Հայաստանի եւ Սուրիոյ քայքայներուն կատարումէն ետք, բացման խօսքով հանդէս եկաւ Հայկալի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Շանթ Մինասեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ 95 տարի շարունակ Հ.Մ.Ը.Մ.ի սերնդակերտ աշխատանքին

եւ արժեւորեց Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայ նորահաս սերունդներու դաստիարակութեան մէջ:

Յայտագիրը սկսաւ մասնաճիւղին գայլիկ-արծուիկ միաւորներու երգչախումբի ելոյթով: Երգչախումբը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ական եւ ազգային-յեղափոխական երգերու շարք մը, ապա յաջորդաբար ներկայացուցան արարական պար, չափական մարզանք, երոպական խաղ պար, գլանով եւ գաւազանով մարզանքներ, սկաուտական բուրգ եւ հայկական







պար: Իւրաքանչիւր ելոյթէ ետք տեսերիցի մը ընկերակցութեամբ ներկայացուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի պատմութենէն հատուած մը:

Հանդիսութեան բանախօսն էր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեայ ազգանուէր վաստակին: Հանդիսութիւնը աւելի խանդավառուեցաւ սկաուտական նորաստեղծ «Պանծալի» նուագա-

խումբով, որ ներկայացուց ազգային երգերու շարան մը:

Աւարտին, բեմ հրաւիրուեցաւ Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան փոխանցելու համար իր հայրական պատգամը: Առաջնորդը ջերմօրէն շնորհակտրեց Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 95-ամեակը, գնահատեց հանդիսութեան մասնակցող քոյրերն ու եղբայրները եւ թելադրեց անոնց, որ հաւատարիմ մնան Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին, միշտ իրենց լաւագոյնը ներկայացնելով, շարունակ ինքնավստահ եւ պինդ մնալով:

Յայտնենք, որ հանդիսութիւնը «Ռատիօ Երազ»ի ուղիղ եթերով ներկայացուեցաւ աշխարհի մէջ սփռուած Հ.Մ.Ը.Մ-ականներուն եւ օտարութեան մէջ գտնուող հալէպահայութեան:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով:







## ՀԱԼԷՊԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

**Րաֆֆի Սիլահեան  
ՀԱԼԷՊ**

**Հ**ովանաւորութեամբ Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի պետական վարչութեան եւ հրատարակչական յանձնախումբին, Շաբաթ, 26 Հոկտեմբեր 2013-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակին նուիրուած տօնկատարութիւնը:

Տօնակատարութեան բացման խօսքը արտասանեց հրատարակչական յանձնախումբի ատենապետ եղբ. Րաֆֆի Սիլ-

լահեան: Եղբայրը իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան՝ ըսելով. «Մեծ եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի աւանդը մեր ազգին, մանաւանդ զաղթօճախներու ազգային դիմագիծը կերտելու եւ կազմակերպելու աշխատանքին մէջ, ուր հակառակ աւելի քան 95 տարիներու պատմութեան, Հ.Մ.Ը.Մ. մնաց երիտասարդ եւ այժմէական, դաստիարակելով նորանոր սերունդներ եւ զանոնք ի սպաս դնելով հայ ազգի ծառայութեան»:

Շարունակելով, եղբ. Սիլահեան հաստատեց, որ Սուրբիան հարուածող արիւնալի տազնապին ընթացքին, Հ.Մ.Ը.Մ. տուաւ իր նահատակները, յանուն հայրենիքի խաղաղութեան, Հալէպէն երկար տարիներու սկառու խմբապետ պատասխանատուներէն եղբ. Յարութ Պալապանեանը, շեփորախումբի պատասխանատու եղբ. Րաֆֆի Տաղլեանը, սկառ-





տական շարքերու անդամ՝ նահատակ զինուոր եղբ. Վրէժ Քէ-չիչեանը, Քեսապէն եղբ. Յովակ Քորթմոսեանը, իսկ Գամիչիէն եղբայրներ Սազո Սանուկեանն ու Մասիս Խաչատուրեանը:

Յայտագիրի առաջին մասով Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեայ երթին ամփոփ պատմականը ներկայացուցին քոյրեր Անի Ազարիկեան, Սոնա Խաչատուրեան, Ալին Հայրապետեան, Լուսին Ապաճեան-Զիլարոշեան, Միրնա Ճարպիկեան, Թային Արզուհայճեան, Յասմիկ Կարճիկեան եւ Շաղիկ Ասատուրեան: Ապա, Համազգայինի «Սարդարապատ» պարախումբը իր մասնակցութիւնը բերաւ «Սարդարապատ» պարով: «Մառութիւն» երաժշտական եղանակը յատուկ մատուցումով ներկայացուեցաւ հանդիսատեսին դաշնամուրի վրայ Յարութ Մկրտիչեանի, Ֆիլիթ Լիզա Սահակեանի, Նուբակ Լիզա Սահակեանի կողմէ: Ժագ Ս. Յակոբեանէն «Կարմիր, կապույտ, նարնջագոյն» ասմունքը ներկայացուեցաւ կատարողութեամբ քոյր Շաղիկ Ասատուրեանի, որմէ ետք «Սարդարապատ» պարախումբը անգամ մը եւս ներկայացաւ արաբական պարով մը:

Կազմակերպիչ մարմինն Հ.Մ.Ը.Մ-ի պետական վարչու-

թեան խօսքը փոխանցեց վարչութեան ատենապետ եղբ. Պօղոս Պալէոզեան: Եղբայրը ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ը որպէս մարզական, սկստական եւ մանաւանդ ազգային կազմակերպութիւն երաշխաւորեց ու ամրապնդեց հազարաւոր հայ երիտասարդներ պատրաստելու իր առաքելութիւնը: Առաքելութիւն մը, որուն գլխաւոր նպատակը եղաւ դաստիարակել սերունդներ, որոնք աննկուն քայլերով պիտի կերտեն յաղթանակներ եւ աւելին՝ յանձնառու պիտի ըլլան ստանձնելու եւ պահելու հայ ժողովուրդի հոգեկան եւ մտաւորական արժանիքները»:

Եղբայր Պալէոզեան նաեւ նշեց, թէ «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով այս պանծալի միութիւնը տարիներ շարունակ դաստիարակած է սերունդներ, որոնք հիմնադիրներու շունչով տոգորուած, ահաւասիկ, այսօր աւելի ինքնավստահ եւ հպարտութեամբ կը կերտեն իրենց յաղթերթը հաւատարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ-ի նպատակին:

Եղբայր Պալէոզեանի խօսքէն ետք, սուրիահայ նահատակներուն նուիրուած երգով բեմ բարձրացաւ երգիչ Մհեր Մինասեան ներկայացնելով «Անմեղ զոհեր» երգը (խօսք՝ Բաժնի Սիւլահեանի, երաժշտական յորինում՝ Մհեր Մինասեանի, գործիքաւորում՝ Նիկոլայ Թոփանեանի): Գեղարուեստական յայտագիրը փակուեցաւ «Սարդարապատ» պարախումբի հայկական պարով:

Հուսկ, հայրական իր պատգամը փոխանցեց Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան: Ան ըսաւ. «Մարդկային կեանքին մէջ բացառիկ են անոնք որոնք հարկւրամեակ մը կը բոլորեն: 95-ամեակը կեանքի մէջ իւրայատուկ պահ մըն է, որուն արտայայտութիւններէն մէկն է հաւաքական գիտակցութեամբ շարունակել այն նուիրական երթը, որ հայ մարդուն հայ ըլլալու գործընթացն է»:

Սրբազան Հայրը նշեց, թէ 95-ամեակը մարտահրաւէր մըն է եւ Հ.Մ.Ը.Մ-ականը փառապանծ օրեր շատ ունեցած է եւ պարտաւոր է այսուհետեւ եւս ունենալ: Հ.Մ.Ը.Մ-ը իր կեանքի ընթացքին մարզական, սկստական շարքերուն մէջ մարդ կերտած է: 104 մասնաճիւղերով, աւելի քան 25 հազար


անդամներով, Հ.Մ.Ը.Մ-ի ծառայութեան 95-ամեակը շատ աւելին տուած է մեր ազգին, որուն համար Հ.Մ.Ը.Մ-ականները պարտաւորութիւն ունին այդ հսկայ ժառանգութիւնը փոխանցելու ներկայ սերունդին:

Աւարտին, Սրբազան Հայրը բարձր գնահատեց անխոնջ աշխատանքը կազմակերպիչ մարմինն, որ երկրի դժուարին պայմաններուն մէջ կարողացաւ համախմբել հալչպահայու-

թիւնը տօնելու համար միութեան 95-ամեակը:

Այուհետեւ, ազգային, ժողովրդական եւ յեղափոխական երգերով հանդիսութեան իրենց մասնակցութիւնը բերին հալչպահայ երգիչներ Գէորգ Գատէհեան եւ Մհեր Մինասեան:

Տօնակատարութիւնը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի «Յառաջ նահատակ» քայլերգով:



with the complements of  
**Restaurant Al-Mayass**





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԱԲՍՏՐԱԼԻԱ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

**Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութիւն ՍԻՏՆԻ**

**20** 13-ը նշեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակը: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց մեծաշուք տօնկատարութիւն մը, որուն նախագահելու եւ օրուան պատգամը փոխանցելու համար Լիբանանէն հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը:

### ՍԻՏՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Եղբ. Մկրտիչեան Սիտնի ժամանեց 9 Հոկտեմբերի երեկոյեան: Սիտնիի միջազգային օդակայանին մէջ եղբայրը դիմաւորեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան, Շրջանային եւ մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ ու խմբապետներ:

### «ՆԱԽԱՍԱՐԴ» ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԿԵԴՐՈՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Եղբ. Մկրտիչեանին առաքելութիւնը սկիզբ առաւ 11 Հոկտեմբերին, Սիտնիի արեւմտեան շրջանի «Նաւասարդ» մասնաճիւղի եւ Հայ Մշակութային Բանոյեան Կեդրոնի այցելութեամբ: Եղբ. Մկրտիչեանին կ'ընկերանային Շրջանա-

յին Վարչութեան անդամներ եւ կեդրոնի բարերարներ՝ եղբ. Անդրանիկ եւ բոյր Անի Բանոյեաններ: Եղբ. ատենապետը կարճ տեսակցութիւն մը ունեցաւ կեդրոնի ինստակարութեան եւ Հ.Յ.Դ. «Քեռի» խումբի անդամներուն հետ, որմէ ետք բոլորը ուղղուեցան մասնաճիւղի սկաուտական հաւաքաժայրը, ուր





ծնողական յանձնախումբը հիւրասիրութեամբ մը պատուեց հիւրը: Եղբ-Մկրտիչեան իր ելոյթով խանդավառեց ներկաները եւ հասկնալի ոճով պատասխանեց իրեն ուղղուած բոլոր հարցումներուն:

Յաջորդ օր, 12 Հոկտեմբերին, եղբ-Մկրտիչեան ներկայ եղաւ գաղութի նորոգ վախճանեալ Առաջնորդ Աղան Արք-Պալէոզեանի յիշատակին գետեղուած խաչքարի արարողութեան, հիւսիսային շրջանի գերեզմանատան հայկական բաժնին մէջ:



**95-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԾԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԻՍԸ**

Շաբաթ, 12 Հոկտեմբերի երեկոյեան տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեակի տօնակատարութեան ճաշկերոյթ-պարահանդէսը:

Ճաշկերոյթին բարի գալուստի խօսքը արտասանեց քոյր Հուրի Տէմիրճեան, ապա ան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Վահրատեանը փոխանցելու իր խօսքը (տեսնել էջ 21): Հրաւիրուեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան փոխանցելու 95-ամեակի պատգամը (տեսնել էջ 3-5):

Ճաշկերոյթին ընթացքին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան ներկայացուց օրւան պարգեւատրեալ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեանի կենսագրական գիծերը եւ միութենական վաստակը: Ապա, ան




հրաւիրեց եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, որպէսզի եղբ. Սարգիսը պարգեւատրէ Հ.Մ.Ը.Մ-ի «Արժանեաց» շքանշանով:

Ներկաներու երկարատեւ ծափողջոյններով եղբ. Մկրտիչեան Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն շքանշանը յանձնեց եղբ. Սարգիս Տէր Պետրոսեանին: Եղբ. Սարգիս շնորհակալութեան յուզումնախառն զգացումները յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային եւ Կեդրոնական Վարչութիւններուն:

Այնուհետեւ երեկոն խանդավառեցին «Պէլքպըրտ» նուագախումբը եւ գաղութի երիտասարդ երգիչ Րաֆֆի Ատուրեանը, որոնց ազգային-յեղափոխական երգերով ներկաները անմոռանալի մթնոլորտ մը վայելեցին եւ շուրջպարերով երեկոյին խանդավառութիւնը իր գագաթնակէտին հասցուցին:


Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեակի կարկանդակը հատեցին Կեդրոնական Վարչութիւնը, Շրջանային Վարչութիւնը, մասնաճիւղերու ատենապետներ, շքանշանակիր







### ՊԱՐԳԵՒԱՏՐԵԱԼԸ՝ ԵՂՔ. ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ



Եղբ. Սարգիս Տեր Պետրոսեան ծնած է 1940-ին, Եգիպտոսի Երբեմնի հայաշատ քաղաքներէն Աղեքսանդրիոյ մէջ: Նախնական ուսումը կը ստանայ տեղւոյն Ազգային Պօղոսեան վարժարանը, ապա՝ Սէնթճորճ Քոլէճի երկրորդական բաժինը աւարտելէ ետք, կը նետուի գործի ասպարէզ:

Եղբ. Սարգիս փոքր տարիքէն մուտք կը գործէ «Կամբ Մարմնամարզական եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութեան Ակումբ» (այժմ՝ Հ.Մ.Ը.Մ.«Կամբ»), իբրեւ գայլիկ, ապա՝ սկաուտ, բարձրանալով սկաուտական գրեթէ բոլոր աստիճանները, մինչեւ խմբապետութիւն, միաժամանակ հետեւելով կարգ մը մարզածելերու: Եղբ. Սարգիս Աղեքսանդրիոյ ազգային, միութենական եւ գաղափարական եռուն մթնոլորտին մէջ կը միանայ Հ.Յ.Դ. պատանեկան ու երիտասարդական միութիւններուն: 18 տարեկանին ան կ'անդամակցի Հ.Յ.Դ. շարքերուն, ուր անսակարկ հաւատարմութեամբ կը ծառայէ մինչեւ օրս:

1964-ին եղբ. Սարգիս կը գաղթէ Աւստրալիա եւ կը հաստատուի Սիտնիի արեւելեան շրջանը: Կուսակցական գործունէութիւնը կը շարունակէ Հ.Յ.Դ.«Դրօ» կոմիտէութեան շարքերուն մէջ, նաեւ կ'անդամակցի Համազգայինի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սիտնիի այդ օրերու նորակազմ մասնաճիւղին, որ ներկայիս կը կոչուի «Անդրանիկ» մասնաճիւղ: 1968-ին ան կը կազմէ ընտանեկան իր բոյնը եւ կը բախտաւորուի երկու զաւակով՝ Սակի եւ Աւօ, կը հարստանայ երկու թոռներով:

Եղբ. Սարգիս ջերմ ջատագովը եղած է ու կը մնայ նորահաս սերունդի հայապահպանութեան եւ հայեցի դաստիարակութեան անփոխարինելի աւանդին, իր կնիքը դրոշմելով Համազգայինի Գոլստըն Ծեմարանի ազնուասիրտ բարերարներու շարքին:

Իբրեւ «Անդրանիկ» մասնաճիւղի անդամ, 1965-1981, եղբ. Սարգիս ստանձնած է վարչական եւ յանձնախմբային պատասխանատու զանազան պաշտօններ: 1981-ին, Սիտնիի արեւելեան շրջանին մէջ բնակութիւն հաստատած Հ.Մ.Ը.Մ.ական խումբ մը եղբայրներու հետ ան կը հիմնէ «Կամբ» մասնաճիւղը եւ կը յաջողի հաւաքավայր մը ապահովել մասնաճիւղի աշխատանքներուն համար: Եղբ. Սարգիս երկար տարիներ ձեռնահասօրէն կը վարէ «Կամբ»-ի ատենապետութեան պաշտօնը: 1995-1997 ան կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան ատենապետի պաշտօնը: 1999-2007 կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Եղբ. Սարգիս Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանին կ'արժանանայ 1995-ին, ձեռամբ Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Միսաք Արզումանեանի:



Եղբայրը եւ վեթերան եղբայրներ: Հոսակ, «Արեւնոտ դրօ» երգով վերջ գտաւ 95-ամեակի տօնակատարութեան խրախճանք-պարահանդէսը:

#### ԱՄՍՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՅԻ

##### ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Կիրակի, 13 Հոկտեմբերի կէսօրին, եղբ. Գառնիկ Մկրտիչեան, ընկերակցութեամբ եղբ. Վիգէն Քորթեանի եւ Շրջանային Վարչութեան անդամներու, այցելութիւն մը տուաւ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Առաջնորդ Հայկազուն Եպս. Նաճարեանին: Եղբ. Գառնիկ Առաջնորդին հանգամանօրէն ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած գործունէութիւնը՝ իր 25 հազար անդամներով: Իր կարգին, Առաջնորդը ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը եւ բարձր գնահատեց միութեան հայանուէր աշխատանքները:



#### «ԱՆԴՐԱՆԻԿ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ԿԵԴՐՈՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, 14 Հոկտեմբերի երեկոյեան, ընկերակցութեամբ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեանի եւ Շրջանային Վարչութեան անդամներու, եղբ. Գառնիկ Մկրտիչեան այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղի սկաուտական կեդրոնը,



ուր ներկայ էին մասնաճիւղին վարչութիւնը, սկաուտական խմբապետական կազմը եւ ծնողական յանձնախումբը:

Այնուհետեւ, եղբ. Մկրտիչեան այցելեց Հ.Յ.Դ. «Դրօ» Առանձնակի Կոմիտէին գրասենեակը: Եղբ. Գառնիկ կոմիտէի անդամներուն փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր նպատակները եւ կատարած աշխատանքները: Տեղի ունեցաւ

կարծիքներու փոխանակում: Կոմիտէի բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ մէջ տարած աշխատանքը:

#### ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԱՐՇԱԿ ԳՈԼԸՍԸՆ ԾԵՄԱՐԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Չորեքշաբթի, 16 Հոկտեմբերին, եղբ. Մկրտիչեան այցելեց Համազգայինի Ար-

### Հ.Մ.Ը.Մ.Ի ԾՆՈՒՄԻՆ ԿԵԼ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՍՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂՔ. ՏԻՐԱՆ ՎԱՀՐԱՏԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ 95-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ)

Հայ ժողովուրդի վերջին 100 տարուան պատմութեան մէջ, համահայկական կարեւոր իրադարձում մը եղաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդը Պոլսոյ մէջ, 16 Նոյեմբեր 1918-ին:

2013-ը կը նշէ 95-ամեակը այս միութեան: Աշխարհի չորս ծագերուն, ուր գոյութիւն ունին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր, ներառեալ՝ մայր հայրենիքի մէջ, մեծ շուքով կազմակերպուած ձեռնարկներ կը պանծացնեն Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տարեդարձը:

Հայկական Յեղասպանութենէն երեք տարի ետք, հրաշքով ազատած, տարագրութեան ենթարկուած հայ սերունդի հոգիներուն մէջ Հ.Մ.Ը.Մ. բարձրացուց դարձեալ ապրելու եւ ստեղծագործելու կամքն ու ոգին: Մենք իբրեւ մասնակի Հ.Մ.Ը.Մ.ի այդ մեծ ընտանիքին, Խաղաղականի ափերէն կը շղթայենք երախտագիտութեան ու հաւատարմութեան մեր ուխտը աշխարհատարած այդ օղակին, որ այսօր կանգուն է ու կը գործէ 104 մասնաճիւղերով, ուժեղ եւ կենսունակ, բազմահազար երկսեռ անդամներով: Հ.Մ.Ը.Մ. մեր նորահաս սերունդներուն մէջ

կը զօրացնէ եղբայրական ոգին, հայրենասիրութեան ու ազգասիրութեան զգացումները, ազգային պատկանելիութեան գիտակցութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութիւնը միութեան 95-ամեակիկարեւոր հանգրուանին կը շնորհաւորէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, աշխարհատարած Շրջանային ու Մեկուսի Վարչութիւնները, սկաուտական ու մարզական խորհուրդները, բոլոր անդամ-անդամուհիները եւ Հ.Մ.Ը.Մ.ի ազգօգուտ եւ սերնդապահ առաքելութիւնը արժեւորող համակիրները, մաղթելով որ ստեղծուած խանդավառութեան ալիքները կը շարունակուին յաջորդող սերունդներու հոգիներուն մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով հայութեան ու հայրենիքին ծառայելու տենչմիշտ վառ ու կենսունակ կը մնայ ու կը փոխանցուի սերունդէ սերունդ, նաեւ՝ ազատ, անկախ, միացեալ հայրենիքի տեսլականով ու Արցախի ազատագրական պայքարի վերջնական յաղթանակով կը խանդավառին սրտերը համայն հայութեան:





չակ Գոլստըն Ճեմարան, ուր ծանօթացալ աշակերտներու աշխատանքին եւ մտերմիկ զրոյց մը ունեցալ տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին հետ: Նոյն օրը, երեկոյեան, եղբ. Մկրտիչեան, ընկերակցութեամբ եղբ. Վիգէն Քորթեանի, հանդիպում մը ունեցալ Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան անդամներուն հետ:

րակցութեամբ եղբայրներ Վիգէն Քորթեանի, Տիրան Վահրատեանի եւ քոյր Անի Բանոյեանի, եղբ. Գառնիկ այցելութիւն մը տուաւ Մելպուռնի Հայ Կեդրոն, ուր ան հանդիպում մը ունեցալ Հ.Մ.Ը.Մ-ի «Արաքս» մասնաճիւղի վարչութեան եւ անդամներուն հետ: Վարչութիւնը պատրաստած էր տեսերիզ մը համա-Հ.Մ.Ը.Մ-ական Զ-րդ մարզախաղերու մասին: Տեսերիզի ցուցադրութենէն ետք, եղբ. Գառնիկ փոխանցեց իր պատգամը: Զայն տրուեցալ ներկաներուն: Եղաւ կարծիքներու փոխանակում, ապա բարձր տրամադրութիւններով բոլորը բաժնուեցան իրարմէ:

**ՍԻՏՆԻ ՎԵՐԱԴԱՐՁ ԵՒ «ԱՆԴՐԱՆԻԿ» ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՕՐՈՒԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ**

Կիրակի, 20 Հոկտեմբերի կէսօրին տեղի ունեցալ Հ.Մ.Ը.Մ-ի «Անդրանիկ»

մասնաճիւղի մարզիկներու գնահատանքի հաւաքոյթը, ուր ներկայ էին բոլոր մարզիկները իրենց պարագաներով: Եղբ. Գառնիկ Մկրտիչեանի կողքին ներկայ էին եղբ. Վիգէն Քորթեան, Շրջանային Վարչութեան անդամներ, «Անդրանիկ» մասնաճիւղի վարչութիւնը, ծնողական յանձնախումբը եւ յատուկ հրաւիրեալներ (Այս մասին տեսնել էջ 23):

Նոյն օրը, երեկոյեան, ընկերակցութեամբ եղբ. Վիգէն Քորթեանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան անդամներուն, եղբ. Գառնիկ Մկրտիչեան այցելեց Հ.Մ.Ը.Մ-ի «Արաքս» մասնաճիւղի կեդրոն: Ներկայ էին մասնաճիւղին վարչութիւնը, ըսկաուտական կազմը եւ անդամները: Տեղի ունեցալ սկաուտական դրօշակի արարողութիւն: Վարչութեան բարի գալուստի խօսքէն ետք, եղբ. Մկրտիչեան փոխանցեց իր խօսքը: Տեղի ունեցալ կարծիքներու փոխանակում եւ ներկաները բարձր տրամադրութիւններով բաժնուեցան իրարմէ:

**ՄՆԱՅԵԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ**

Երկուշաբթի, 21 Հոկտեմբերէն 25 Հոկտեմբեր, եղբ. Գառնիկ տեսակցութիւններ ունեցալ Հ.Մ.Ը.Մ-ական եղբայրներու եւ քոյրերու հետ:

Եղբ. Մկրտիչեանի այցելութիւնը մեծ խանդավառութիւն ստեղծեց Աւստրալիոյ հայ գաղութին եւ մանաւանդ՝ Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին համար:

25 Հոկտեմբերի յետմիջօրէին եղբ. Գառնիկ Մկրտիչեան վերադարձաւ Լիբանան:





# ԳՆԱՀԱՏԱՆՔԻՆ ԱՐԺԷՔԸ

## Յովհաննես Մարտոյեան ՄԻՏՆԻ

**Ն**ախաձեռնութեամբ Հ.Մ.-Լ.Մ.ի Սիտնիի «Անդրանիկ» մասնաճիւղի վարչութեան եւ կազմակերպութեամբ մասնաճիւղի մարզական յանձնախումբին, Կիրակի, 20 Հոկտեմբեր 2013-ին տեղի ունեցաւ մասնաճիւղի մարզական խումբերու, մարզիկներու, մարզիչներու, խումբերը հովանաւորող հաստատութիւններու, անհատ բարերարներու, սկաուտական խմբապետական կազմի եւ ծնողական յանձնախումբի գնահատանքի հաւաքոյթը: Տարբեր տարիքի հարիւրաւոր երկսեռ մարզիկներ, ծնողներ, Հ.Մ.-Լ.Մ.ական քոյրեր ու եղբայրներ, վեթերաններ ողողած էին մասնաճիւղին սկաուտական հաւաքավայրին բացօթեայ դաշտը:

2013-ը կը նշէր Հ.Մ.-Լ.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակը: Այս առիթով, Հ.Մ.-Լ.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութիւնը Լիբանանէն հրաւիրած էր Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը նախագահելու 95-ամեակի ձեռնարկներուն: Գնահատանքի հաւաքոյթին ներկայ էին եղբ. Գառնիկ



Մկրտիչեան, Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան սիտնիաբնակ անդամ եղբ. Վիգէն Քորթեան, Շրջանային Վարչութեան կազմը եւ հրաւիրեալներ:

Մարզական յանձնախումբի կողքին կազմուած այլ յանձնախումբ մը ստանձնած էր հայկական խորովածով եւ տեսակաւոր անուշեղէններով ներկայ հասարակութիւնը գոհացնելու պարտականութիւնը: Կէսօրէ ետք գործադրուեցաւ կարճ յայտագիր մը: Բարի գալուստի մաղթանքները ներկաներուն փոխանցեց վարչական եղբ. Նարեկ Միքայէլեան, միաժամանակ ան մանրամասն զեկուցեց տարեշրջանին ընթաց-

քին մասնաճիւղին կատարած մարզական գործունէութեան մասին: Եղբ. Միքայէլեան ուրախութեամբ յայտարարեց մասնաճիւղի խումբերուն արձանագրած պատուաբեր յաջողութիւնները:

Ապա, յաջորդաբար, իրենց սրտի խօսքերը արտասանեցին մասնաճիւղի ատենապետ եղբ. Ալեքս Խառեան, Շրջանային Վարչութեան անդամ քոյր Անի Բանոյեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան: Բոլոր խօսողները գնահատեցին մասնաճիւղին մարզական գործունէութիւնը, անոր մաղթելով նորանոր յաջողութիւններ:







Տեղի ունեցաւ մետայնե-  
րու եւ բաժակներու տուչու-  
թիւն: Բոլորը ուրախ տրա-  
մադրութեամբ ստացան մէկ  
տարուան իրենց քրտինքին  
բարենիշը:

Հուսկ, հրաւիրուեցաւ Հ.Մ.-  
Ը.Մ-ի Կեդրոնական Վարչու-  
թեան ատենապետ եղբ. Գառ-  
նիկ Մկրտիչեան տալու իր  
պատգամը: Եղբ. Մկրտիչեան  
հանգամանօրէն ողջունեց Հ.Մ.-  
Ը.Մ-ի 95-ամեակին նուիր-  
ւած այս գնահատելի ձեռնար-  
կը, ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի  
մասնաճիւղերուն աշխարհա-  
տարած ու բազմաբնոյթ աշ-  
խատանքները, շեշտը դնելով յատկա-  
պէս սկաուտական եւ մարզական նա-  
խաձեռնութիւններուն վրայ, որոնց խօ-  
սուն փաստերը կը հանդիսանան համա-  
Հ.Մ.Ը.Մ-ական 9-րդ մարզախաղերը,  
Հայաստանի մէջ, 660 երկսեռ մարզիկ-  
ներու մասնակցութեամբ, եւ 2014-ի ամ-



րան Հայաստանի մէջ իրագործուելիք  
համա-Հ.Մ.Ը.Մ-ական 10-րդ ընդհանուր  
բանակումը, որ իր կարգին պիտի հա-  
մախմբէ բազմահարիւր նորահաս պա-  
տանիներ:

«Աւստրալիոյ շրջանը, հակառակ իր  
ունեցած աշխարհագրական հեռաւոր-  
ութեան, միշտ յարգած է ժամադրու-

թիւնը՝ մասնակցելով Կեդրո-  
նական Վարչութեան բոլոր  
ձեռնարկներուն, եւ որպէս  
տիպար եւ օրինապահ շրջան  
միշտ գնահատուած է», շեշ-  
տեց եղբ. Մկրտիչեան: Ապա,  
ան իր խօսքը եզրափակեց ան-  
գամ մը եւս շնորհաւորելով  
շրջանը, որ միութենական ու  
ազգային բարձր գիտակցու-  
թեամբ ստանձնած է Հ.Մ.-  
Ը.Մ-ի հիմնադիրներուն  
ուղիով նորահաս սերունդը  
առաջնորդելու պարտակա-  
նութիւնը, ազգին ու հայրե-  
նիքին ծառայելու աննկուն  
յանձնարարութեամբ:

Գնահատանքի հաւաքը շարունակուե-  
ցաւ ազգային ու Հ.Մ.Ը.Մ-ական միջնո-  
րորտով: Օրուան միջնորդութէն խանդա-  
վառուած կատարուեցան սրտաբուխ նը-  
ւիրատուութիւններ, որոնց համար շնոր-  
հակալական եւ խրախուսական խօսքեր  
փոխանցեց եղբ. Թոնի Աբէլեան:

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabadoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com

Photos: © Yann Arthus-Bertrand / La Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VICKEN 2005 FWB





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԸ ՄԵԾ ՈԳԵԻՈՐՈՒԹԵԱՄԲ ՏՕՆԱԽՄԲԵՑ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 45-ԱՄԵԱԿԸ

Մարտ Բեչիչեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**Շ**աբաթ, 2 Նոյեմբեր 2013-ին, Հոլիվուտի «Մոնթե Բրիսթո» ճաշարահին մէջ, մեծ ոգեւորութեամբ տօնախմբուեցաւ շրջանի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին ծնունդ տուած Լոս Անճելըսի մասնաճիւղին 45-ամեակը, աւելի քան 300 Հ.Մ.Ը.Մ.ասէրներու, Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու: Ոտքի էր մասնաճիւղին ամբողջ ընտանիքը: Արեւմտեան Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը կը ներկայացնէր Հոլիվուտի Ս. Կարապետ եկեղեցւոյ հովիւ Վիգէն Ա. Քհնյ. Վասիլեանը: Հոն էին Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեանն ու այլ անդամներ, քոնկրէտական էտրմ Շիֆի ներկայացուցիչ՝ մասնաճիւղի անդամներէն Սէրի Յովակիմեան, մասնաճիւղի հիմնադրութեան մեծապէս նպաստած «Բաֆֆի» միութեան, շրջանի Հ.Յ.Դ. «Գարեգին Նժդեհ» կոմիտէութեան, ՀՕՄ-ի «Մայր» մասնաճիւղի, Ալեք Փիլիպոս Ազգ. վարժարանի խնամակալ մարմնի ներկայացուցիչները, մասնաճիւղի հիմնադիր անդամներ, համակիրներ, հիւրեր եւ բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Ձեռնարկը նուիրուած էր մասնաճիւղէն յաւէտ հեռացած քոյր-եղբայրներու յիշատակին:



Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի 2012-2013 տարեշրջանի վարչութեան կազմը:

### ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

Ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին անունով ներկաները ողջունեց ատենապետ քոյր Մարտ Բեչիչեան: Ան իր գոհունակութիւնը յայտնեց, որ ձեռնարկին կը մասնակցին մասնաճիւղի հիմնադիր անդամներ, սկստալ խմբապետ-խմբապետուհիներ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներ, վերահանդիպ-

ման գեղեցիկ առիթի մը վերածելով ձեռնարկը: Ապա, ան բեմը յանձնեց մասնաճիւղի փոխ ատենապետ եղբ. Յովիկ Շահինեանին, որ ձեռնհասօրէն կատարեց ձեռնարկին հանդիսավարութիւնը:

### ԷՏԸՄ ՇԻՖԻ ՊԱՏԳԱՄԸ

Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայքայներու կատարումէն ետք, սեղանները օրհնեց Վիգէն Ա. Քհնյ. Վասիլեան: Ծերակուտական էտրմ Շիֆ նահանգէն դուրս գտնուելով, տեսերիզով մը փոխանցած էր իր պատգամը, որ ցուցադրուելով մեծապէս ոգեւորեց մասնակիցները: Տեսերիզին մէջ, Շիֆ շնորհաւորելով մասնաճիւղին 45-րդ տարեդարձը՝ բարձր կը գնահատէր անոր օգտաշատ գործունէութիւնը եւ զայն իրականացնող ղեկավարութիւնը, յատկապէս երիտասարդութեան առողջ միջավայր մը ապահովելու կարեւոր գործին մէջ:



Շրջանային վարչութեան նահատագիրի յանձնում: Չախէն աջ՝ եղբայրներ Լառնիկ Աբրահամեան, Արամ Թովմաս եւ Բաֆֆի Յնժալեան:





Լուս Աճճելուսի կրթական խորհուրդի անդամներ Սթիվ Զայմըրի Գերկայացուցիչը, մասնաճիւղի ատենապետ Արամ Թովմասին կը յանձնէ ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին գնահատագիրերը:

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Մասնաճիւղի վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Արամ Թովմաս: Եղբայրը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադրութեան գեղեցիկ գաղափարը հետզհետէ հայութեամբ բազմացող Հոլիվուտի շրջանին մէջ եւ իր հպարտութիւնը յայտնեց, որ անդամակցած է ու կը ծառայէ եզակի այս միութեան շարքերուն:

Մասնաճիւղին արձանագրած յաջողութիւններուն մասին խօսելով, եղբայրը ըսաւ. «Մեր հիմնադիրներուն նպատակը համայնքին համար օրինակելի առաջնորդներ եւ քաղաքացիներ պատաստելն էր, որուն մէջ յաջողեցան, անմահացնելով իրենց անունները շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան մէջ: Այն հիանալի աշխատանքը, զոր 45 տարի առաջ սկսան մեր հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ-ականները, շարունակուեցաւ եւ մասնաճիւղը առաջնորդեց այնպիսի յաջողութիւններու եւ նուաճումներու, որոնց արդիւնքն է Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանին 18 մասնաճիւղերով հզօրացումը»:

Եղբայրը շնորհակալութիւն յայտնելով մասնաճիւղին անցալի եւ ներկայի ղեկավարներուն, վստահեցուց, որ ըսկուած աշխատանքը պիտի շարունակուի եւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներուն երազը պիտի իրականանայ, նոր 45-ամեակներ կերտելու հաստատակամութեամբ:

«Մենք հպարտութեամբ կը նայինք

անցալին, միաժամանակ խանդավառութեամբ եւ վճռակամութեամբ կ'ուղղուինք դէպի ապագայ, որովհետեւ ան կը յուսադրէ եւ յարատեւելու գեղեցիկ առիթներ կ'ընծայէ մեզի», եզրակացուց եղբայրը եւ շնորհակալութիւն յայտնելով ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին եւ ներկաներուն, ուրախութեամբ ներկայացուց վարչական իր եղբայրները:

ՄԱՍՆԱՃԻՂԻ ՀԵՌՈՒՅԱԾ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԵՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Այնուհետեւ, «Անցեալով կերտեցք ապագան» կարգախօսով, տեղի ունեցաւ ներկայացումը մասնաճիւղին հեռացած այն անդամներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ-ականի իրենց պարտականութիւնները կատարելով, հրաժեշտ տուած են



Եղբ. Նուպար Սարգիսեան (կեդրոնը) կը հատէ 45-ամեակի կարկանդակը, շրջապատուած մասնաճիւղի վարչութեան եւ ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբի անդամներով:

մասնաճիւղին եւ այս աշխարհին, իրենց ետին ձգելով միութենական հարուստ ժառանգութիւն մը, որմով սերունդներ կը ղափարակուին՝ վառ պահելով Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը: Այսպէս, իրենց նկարներով եւ համապատասխան կարճ բացատրութիւններով հերթաբար ներկայացուեցան մասնաճիւղի հիմնադիր վարչութեան առաջին ատենապետ Յարութ Բարսեղեանէն մինչեւ վերջերս մահացած մարգիկ Էդի Նաչադը: Յիշատակուեցան նաեւ եղբայրներ Քերրո Առաքելեան, Յակոբ Օվայեան, Ճեմիլ Սարգիսեան, Ժագ Տէր Պողոսեան, Նիկոլ Արզումանեան, Միքայէլ Եմենիճեան, Ճորճ Պաղտոյեան, Սերոբ Սպարտակեան, Կարպիս Շիրտըմեան, Արշակ Տօնոյեան, Ճորճ Աբէլեան, Ճէրի Սերիտչեան, Գէորգ Ասլանեան, Բաֆֆի Հայրապետեան, Յարութ Կիրիւնյեան: Մոռացութեանց համար ներողամտութիւն խնդրուեցաւ ներկաներէն:

Յատուկ յիշատակութեամբ ներկայացուեցան տէր եւ տիկ. Տիգրան եւ Զարուհի Տէր Ղազարեանները, որոնք իրենց կտակէն յատուկ բաժին մը ժառանգելով Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղին, մեծապէս նպաստած էին Հոլիվուտի Հայ Կեդրոնի իրականացման:

45-ԱՄԵԱԿԻ ՄՈՍԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ

Յաջորդեց մասնաճիւղին 45-ամեակը յատկանշող մտավառութիւնը: 45 Հ.Մ.Ը.Մ-ականներ, իւրաքանչիւրը հովանաւորելով մասնաճիւղի գործունէութեան

տարիներէն մէկը, վառեց համապատասխան մոմը: Առաջին մոմը վառեցին Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Ապա, Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան: Եղբայրը հպանցիկ ակնարկ մը նետելով Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադրութեան պատմական տուեալներուն վրայ, բարձր գնահատեց նախաձեռնուած աշխատանքը եւ յատուկ երախտագիտութեամբ յիշատակեց մասնաճիւղի առաջին վարչութեան անդամներուն անունները, ընդգծելով անոնց բացառիկ աշխատանքներն ու արձանագրած նուաճումները:

«Բարձրացի՛ր-բարձրացո՛ւր» նշանաբանին հաւատարմով, 1968 թուականից սկսեալ Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղը ծառայել է իր գաղութին եւ իր ցուցաբերած ազգանպաստ աշխատանքներին շնորհիւ արձանագրել է գանազան յաջողութիւններ եւ արժանացել է բազմաթիւ գնահատանքների, որի համար հպարտ ենք բոլորս: Սիրելիներ, վստահ եմ համամիտ պիտի լինէք որ հնարաւոր չէ այս կարճ ժամանակամիջոցում մասնաճիւղի անցեալ 45 տարւան յաջողութիւնները յիշել եւ գնահատել, բայց վստահեցնում եմ բոլորիդ, որ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգների Շրջանային Վարչութիւնը լաւատեղ



եակ է մասնաճիւղի 45 տարիների անցեալին եւ բարձր է գնահատում անոր բոլոր աշխատանքները», ընդգծեց եղբ. Աբրահամեան: Ապա, Շրջանային Վարչութեան քարտուղար եղբ. Բաֆֆի Յնձալեանի ընկերակցութեամբ, անշնորհաւորական յուշագիր մը յանձնեց մասնաճիւղի վարչութեան՝ առ ի գնահատանք մասնաճիւղի 45 տարիներու բեղուն գործունէութեան եւ զայն իրականացուցած բերաւոր անդամ-անդամուհիներու անսակարկ նուիրումին:

նարկի կազմակերպիչ յանձնախումբի եւ մասնաճիւղի վարչութեան անդամները: Այսպէս, գնահատագիրներ յանձնուեցան քոնկրէտական էտրմ Շիֆի, սենաթոր Գեւրն Տը Լէոնի, վերահսկիչ Մայքըլ Անթոնովիչի, նահանգային խորհուրդի անդամ Մայք Կաթոյի, Լոս Անճելըսի քաղաքապետ էրիք Կարսէթիի, Լոս Անճելըսի կրթական խորհուրդի անդամներ Սթիւ Զայմըրի եւ Պենէթ Քայզըրի կողմէ:

45-ԱՄԵԱԿԻ ԿԱՐԿԱՆԴԱԿԻ ՀԱՏՈՒՄԸ

Յայտագրի վերջին բաժինով տեղի ունեցաւ մասնաճիւղի 45-ամեակի կարկանդակին հատումը, զոր կատարեց Նիւ Ճըրզիէն յատուկ այս ձեռնարկին համար ժամանած, մասնաճիւղի հիմնադիր անդամներէն, երկար տարիներու վարչական եղբ. Նուպար Սարգիսեանը: Այնուհետեւ, երեկոն խանդավառեցին երգիչ Գօգօ Հայիթեանն ու իր նուազախումբը: Ներկաները եւ յատուկ պէս երիտասարդութիւնը ուրախութեամբ երկար ժամեր պարեց հայկական ու միջազգային երգերու եւ պարերանակներու ստեղծած ոգեւորութեամբ:



Մասնաճիւղի փոխ ատենապետ (ճերկայիս ատենապետ) եղբ. Յովիկ Շահինեան:

Ձեռնարկի վերջին բաժինով Հայիթեանի հրամցուցած ազգային-յեղափոխական երգերու փունջը աւելի խանդավառեց ներկայ երիտասարդները, որոնք առաւօտեան փոքր ժամերուն չուզելով հեռացան սրահէն, Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղը միշտ հզօր պահելու հաստատակամութեամբ:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԼԵՆՏԵՅԼԻ «ԱՐԱՐԱՏ» ՄԱՄՆԱՃԻՒՂԻ 35-ԱՄԵԱԿ

ՔՈՅՐ ԺԱՍԻԿ ԶԱՌԱՀԵԱՆ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ 2013-Ի «ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ»

## Թղթակից ԿԼԵՆՏԵՅԼ

Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղը, որը հիմնուել է 1978 թուին, այսօր Հ.Մ.Ը.Մ.ի ամենաբազմամանդամ մասնաճիւղն է իր աւելի քան 2400 անդամներով, որոնք առօրեայ իրենց աշխատանքն են տանում «Արարատ» մասնաճիւղի գոյգ կենտրոնների յարկի տակ:



35 տարիների ընթացքում, «Բարձրացիր-բարձրացրու» նշանաբանով քայլեց «Արարատ»ը, իր հետ քայլեցնելով 15.000-ից աւել հայորդիներ, որոնք այսօր իրենց ուրոյն տեղն են գրաւել համայնքում: 35 ամբողջ տարիներ եկել, թրծուել եւ իրենց տեղն են զիջել գալիք սերունդին «Արարատ»ի յարկի տակ հասակ առած հայորդիները:

Մարզական աշխատանքները համադրելու եւ կազմակերպելու համար իրենց անվերապահ ներդրումն են կատարում մարզական բաժանմունքների վարիչ մարմինները, մարզիչները, ծնողական յանձնախմբերն ու ենթալանձնախմբերը:

Մարզական խմբերն իրենց մասնակցութիւնն են բերում Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգների Շրջանային Վարչութեան կողմից կազմակերպուած բոլոր խաղերին, միջ-մասնաճիւղային մրցութիւններին եւ ամերիկեան տարբեր կազմակերպութիւնների մրցոյթներին: Կազմակերպուած են նաեւ ներքին խաղեր, տարբեր մարզաճիւղերի համար: Նաւասարդեան 38-րդ մարզախաղերին, մասնաճիւղը մասնակցել է աւելի քան հազար մարզիկներով եւ գրաւել առաջնակարգ տեղեր:

Մարզական բաժանմունքի կողքին իրենց կանոնաւոր աշխատանքն են տանում աւելի քան 400 սկաուտներ, որոնց շարքերն են շտապում նորագիրները՝ ստանալու կարգապահական, հայրենասիրական եւ սկաուտին յատուկ դաստիարակութիւն, ապահովելու իրենց ապագան որպէս կատարեալ, ճշգրիտ քաղաքացի եւ ազգանուէր հայ՝ ծառայելու իր հարազատ ժողովրդին:

Իւրաքանչիւր տարի սկաուտական բաժանմունքը կազմա-

կերպում է մէկշարաթեայ ընդհանուր բանակում, որին իրենց մասնակցութիւնն են բերում աւելի քան 300 սկաուտներ, որոնք փորձառութեան լի օրեր անցկացնելով՝ աշխատանքի դաշտ են վերադառնում:

Բաժանմունքների անդամները մարզական, սկաուտական եւ մշակութային դաստիարակութիւն են ստանում մասնաճիւղում, իսկ նրանց անվերապահօրէն սպասարկում են երէցների բաժանմունքը՝ հասութաբեր իրենց աշխատանքներով, եւ ծրագիրների բաժանմունքը՝ դաստիարակչական ու կրթական իր ծրագիրներով: Այս բոլորը համատեղ աշխատում են յանուն մասնաճիւղի վերելքին ու ապահովում գալիք սերունդի

ապագան՝ առաջնորդելով նրանց դէպի անվտանգ ու լուսաւոր ճանապարհ:

Մասնաճիւղի շարքերում հասակ առած նախկին անդամներն այսօր դարձել են ղեկավար տարրեր, իսկ այսօրուան անդամներն երաշխաւորում են վաղուան ղեկավարութիւնն, անկասկած:

## ԺԱՍԻԿ ԶԱՌԱՀԵԱՆ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ 2013-Ի «ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ»

Հիմնադրութեան իսկ թուականից սովորութիւն է, որ իւրաքանչիւր տարի համայնքին ներկայացուի մասնաճիւղի տարիների նուիրեալ մի անդամ, որպէս պատկան տարուան «Պատուոյ անդամ»: Այս տարուան մասնաճիւղի պատուոյ անդամն է տարիների նուիրեալ, հաւատաւոր, հանրաժանօթ դէմք, ազգային եւ հասարակական գործիչ՝ Ժասիկ Զառահեանը: Նա բազմիցս պարգեւատրուել է բարձրագոյն տիտղոսներով, իր տարած եզակի եւ նուիրական գործունէութեանց համար, որոնցից կարելի է նշել մի մասը-

- Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգների Շրջանային Վարչութեան կողմից՝ որպէս «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»:
- Մերակուտական Ճէք Սքաթի, Նահանգային խորհրդարանի անդամներ Տարիօ Ֆրոմբրի եւ Քարոլ Լուիի կողմից՝ որպէս «Տարուան ոչ շահութաբեր կազմակերպութիւնների պաշտօնեայ» (Non-Profit Organization Employee of the Year):
- ՀՕՄ-ի Շրջանային Վարչութիւնը բազմիցս բարձր գնահատելով իր անսակարկ գոհողութիւնը, տքնաջան աշխատանք-



քը, տնտեսական եւ բարեսիրական անսահման գործունէութիւնը՝ պաշտօնին առնթեր, աշխատանքների յաջողութեան գծով, պարգեւատրել է գայն:

- Քոնկրէսական էտրմ Շիֆի կողմից պարգեւատրուել է իբրեւ «Տարուան կինը» (Woman of The Year):

- Պարգեւատրուել է իբրեւ «Պատուոյ արցախցի», Մաղկաշատ գիւղի մէջ տարիների ընթացքին իր բարեսիրական եւ արդիւնաւէտ աշխատանքների համար:

- Հայ-ամերիկեան առեւտրական գրասենեակի (Chamber of Commerce) կողմից պարգեւատրուել է իբրեւ Woman in Service

- Հայաստան Համահայկական Հիմնադրամի կողմից պարգեւատրուել է իբրեւ «Տարուայ կամաւորը» (Volunteer of the Year):

- ՀՕՄ-ի «Մեղրի» մասնաճիւղի կողմից մայրերի օրուան առիթով իրեն տրուել է «Տարուան մայրը» կոչումը:

- Հայկական ոսկրածուծի նուիրատուների ռեժիսքրի կողմից պարգեւատրուել է որպէս «Տարուան կամաւորը» (Volunteer of The Year) գնահատագրով:

- 2012-ի Մայիսին, Արցախի ազատագրման 20-ամեակի առիթով, Արցախի Հանրապետութեան կողմից, Ստեփանակերտի մէջ նախագահ Բակօ Սահակեանի ձեռամբ պարգեւատրուել է նախագահական յատուկ «Երախտագիտական մետալ»ով, Արցախում իր տարած երկու տասնեակ տարիների աշխատանքի համար:

- Նոյեմբեր 2012-ին, Հայաստան Համահայկական Հիմնադրամի կողմից պարգեւատրուել է մետալով, իր երկու տասնեակ տարիների աշխատանքի համար:

- ՀՕՄ-ի «Սիփան» մասնաճիւղի կողմից պարգեւատրուել է «Հայ մօր տարուան» առիթով:

Այս առիթներով նաեւ ստացել է շնորհաւորագրեր եւ գնահատագրեր. Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմից ստացել է «Գիր գնահատագրի»՝ իր ազգօգուտ աշխատանքների համար: Քոնկրէսական էտրմ Շիֆից՝ «Բացառիկ ծառայութեան» համար (In Recognition of Outstanding and Invaluable Service to the Community), Լոս Անճելըսի գաւառային վերակացու Մայքըլ Անթոնովիչից, քաղաքային խորհուրդի անդամ (ներկայիս քաղաքապետ) էրիկ Կարսէթից, նահանգային խորհուրդի անդամ Փօլ Գրիգորեանից, Օգնական մեծամասնութեան ղեկավար Քելին Տը Լիոնից, նահանգային ծերակուտականներ Գարօլ Լուիից, Անթոնի Փորթանթինոյից եւ Մայք Կաթոյից, ինչպէս նաեւ՝ Կլէնտէյլի քաղաքապետարանից, Հայ Դատից, Հայց-Առաք-Ս-Աստուածածին եկեղեցիից եւ տասնեակ տարբեր ամերիկեան եւ հայկական կազմակերպութիւններից:

Արժանիքներով լի ժափկ Ջառահեանը տիպար մի հայուհի է՝ օրինակ հանդիսանալով բոլորիս:

[www.homenetmen.org](http://www.homenetmen.org) [www.homenetmen.org](http://www.homenetmen.org) [www.homenetmen.org](http://www.homenetmen.org)  
[www.homenetmen.org](http://www.homenetmen.org) [www.homenetmen.org](http://www.homenetmen.org) [www.homenetmen.org](http://www.homenetmen.org)  
[www.homenetmen.org](http://www.homenetmen.org) [www.homenetmen.org](http://www.homenetmen.org) [www.homenetmen.org](http://www.homenetmen.org)

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

# HOTEL

★ ★ ★

# PAVILLON MONCEAU

## PARIS

Full of charme,  
 Tastefully decorated 36 rooms  
 and 6 suites with individual  
 heating / air conditioning,  
 direct access telephone line,  
 internet connection, minibar,  
 safety box and satellite TV.  
 Private bathroom with hairdryer.  
 The suites can accommodate  
 3 adults or a family  
 with parents and 2 children.

PAVILLON MONCEAU

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
 Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
[infos@pavillon-monceau.com](mailto:infos@pavillon-monceau.com)  
[www.pavillon-monceau.com](http://www.pavillon-monceau.com)






# ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔՈՆԿՐԷՍ ՀՈՆԿ ՔՈՆԿՈՒՄ

## Թղթակից ԵՐԵՒԱՆ

**2** 013 թուականի Նոյեմբերի 22-24-ը Հոնկ Գոնկոմ կայացավ կրթութեանը նուիրուած ըսկաուտական համաշխարհային առաջին



քոնկրէսը: Եռօրեայ միջոցառումը մէկ յարկի տակ էր հաւաքել շուրջ հինգ հարիւր մասնակիցների՝ երկրագնդի գրեթէ բոլոր երկրներից:

Երեխաների եւ երիտասարդների մշտապէս փոփոխուող պահանջներին եւ ձգտումներին արդիւնաւէտ արձագանգելու համար սկաուտական շարժման աշխարհն աւելի լաւը դարձնելու տեսլականն էր առիթ հանդիսացել՝ ըսկաուտական շարժման առաջարկած կրթութիւնը վերանայելու, վերամշակելու եւ զարգացնելու անհրաժեշտութիւնը:


Սկաուտական շարժման հիմնադրի՝ Պէյտըն Փաուըրի անունը կրող հիւրանոցում ընթացող աշխատանքներին հետեւելու հնարաւորութիւն ունէին ոչ միայն քոնկրէսի մասնակիցները: Միջոցառումը բացառիկ էր դարձնում նաեւ այն հանգամանքը, որ քոնկրէսի աշխատանքներին առջանց տարբերակով



կարող էին հետեւել բոլոր ցանկացողները: Աւելին, օգտատէրերը (որոնց թիւը գերազանցում էր հազարը) կարող էին ոչ միայն լսել բոլոր դասախօսութիւնները, այլ նաեւ անմիջական մասնակցութիւն ունենալ՝ իրենց հարցերն ու մեկնաբանութիւններն ուղղելով հենց բանախօսներին: Իսկ հրաւիրուած փորձագէտներից իւրաքանչիւրն իր ոլորտի լաւագոյններից էր՝ ականաւոր հասարակական գործիչներ, առեւտրական ոլորտի ներկայացուցիչներ, փայլուն ձեռներէցներ եւ այլ մասնագէտներ:

Քոնկրէսի վերջնական զեկոյցը պատրաստ կը լինի միայն Փետրուարին, սակայն մասնակիցների եւ կազմակերպիչների արձագանգներից դատելով՝ կրթութեանը նուիրուած քոնկրէսի յաջողութիւնն ակնյայտ է, իսկ դա վկայում է, որ երկրորդը շատ չի ուշանայ:





ՄԻԱՔՈՐԵԼՈՎ ՈՒԹԵՐԸ  
ԱՇԽԱՐՀԸ ԴԱՐՉՆԵՆՔ  
ՄԵԼԻ ԼՄԷ


THE ACADEMY  
2012



ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ  
ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆՆ Է

Նոյեմբերի 29-ից նոյեմբերի 3-ը Բելգիայում տեղի ունեցած ամենամեայ «The Academy» ծրագրին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը ներկայացնում էր քոյր Անուշ Ասատրեանը: Ծրագրին մասնակցում էին 40 տարբեր երկրներից սկաուտներ, որոնք համախմբուել էին մի գաղափարի շուրջ՝ նպաստել սկաուտության ընդլայնմանն ու զարգացմանը, տարածել նրա գաղափարախօսությունը եւ ծառայել հասարակությանը՝ լինելով օգտակար ու պիտանի մարդ:

Քոյր Անուշը խորապէս տպաւորուած էր ծրագրից. «Ամէն ինչ կազմակերպւած էր բարձր մակարդակով: Տեսնելու եւ սովորելու շատ բան կար: Ծրագիրն անցկացնում էին հմուտ մասնագէտներ Իտալիայից, Ֆրանսիայից, Հունգարիայից եւ մի շարք այլ երկրներից: Փորձագէտները ջանք չէին խնայում փոխանցելու համար գիտելիքի անըստ պաշար, կիսուելու համար սկաուտական կեանքի մեծ փորձառութեամբ ու ձեռքբերումներով: Երկիրը միայնակ ներկայացնելը մեծագոյն պատասխանատուութիւն էր, որը յաղթահարեցի ուժերիս ներածին չափով, որպէս հայ սկաուտ փորձելով լաւագոյնս ցուցաբերել մեր երկրի ազգային արժէքներն ու Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի հարուստ ժառանգութիւնը: Կը փորձեմ ծրագրից քաղած գիտելիքներով օգտակար լինել կազմակերպութեանս եւ իմ լուծման ներդրել նրա զարգացման կարեւոր գործում»:



Երիտասարդների միջազգային օրուան ընդառաջ, Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնում կազմակերպւեց հանդիպում երիտասարդական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի անդամները: Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանն իր ողջոյնի խօսքում ընդգծեց, որ հայոց բանակը եւս իւրատեսակ, ամենամեծ երիտասարդական կառույցն է, որը կանգնած է պետութեան անվտանգութեան եւ կայունութեան հիմքում:

Երիտասարդներին խրախուսելու եւ պետութեան առաջընթացի գործում նրանց դերը կարեւորելու նպատակով երիտասարդների միջազգային օրուան կապակցութեամբ Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանն եւս քաղաքապետարանում հիւրընկալեց երիտասարդական կառույցների ներկայացուցիչներին: Հանդիպումն անցաւ ջերմ եւ անմիջական մրթնոլորտում, որի ժամանակ Երեւան քաղաքի ծրագրերում ակտիվ մասնակցութիւն ունենալու համար Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը արժանացաւ շնորհակալագրի:





# Հ.Ա.Տ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ 43-ՐԴ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԸՆՏՐԵՑ ՆՈՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**Հ**.Ա.Տ.-ի Լիքանանի 43-րդ ներկայացուցչական ժողովը տեղի ունեցավ 22-27 Նոյեմբերին, «Աղբալեան-Հ.Ա.Տ.» մարզահամալիրի «Հրայր Մարուխեան» ժողովասրահին մէջ, Անթիլիաս:

Ժողովին սկիզբը ներկայացուցեց 2011-2013 երկամեակի Շրջանային Վարչութեան գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը, որմէ ետք լուսաբանական հարցումներ ուղղուեցան անոր շուրջ, ապա կատարուեցաւ ըստ էութեան քննարկում:

Այնուհետեւ, ժողովին մասնակից Հ.Ա.Տ.ականները

առաջարկներ ներկայացուցին նորընտիր Շրջանային Վարչութեան:

Աւարտին, ընտրուեցաւ նոր Շրջանային Վարչութիւն, որ իր առաջին ժողովին դիւանը կազմեց հետեւեալ ձեւով.-  
Եղբ. Հրայր Խաչատուրեան-ատենապետ  
ՔոյրԹային Օրտողլեան-քարտուղար  
Եղբ. Նազո Հապիպեան-գանձապահ  
Եղբայրներ Վաչէ Նաճարեան, Վաչէ Մատուրեան, Բաֆֆի Մունջողլեան, Յովիկ Կէօզիլպէօյիլքեան, Զոհրապ Մարգարեան եւ Յարութ Ալաճաճեան խորհրդականներ:

## Հ.Ա.Տ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ «ԱՔՕ ՆՔՆՔՃԵԱՆ» ՄՐՑԱՇԱՐՔԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ

### Թղթակից ՊՈՒՐԾ ԶԱՍՈՒՏ

**Հ**ովանաւորութեամբ Հ.Ա.Տ.-ի Լիքանանի Շրջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ Հ.Ա.Տ.-ի երկրորդական խումբերու ֆուտպոլի յանձնախումբին, Շաբաթ, 2 եւ Կիրակի, 3 Նոյեմբեր 2013-ին, տեղի ունեցաւ «Աքօ Նէնէճեան» միջ-մասնաճիւղային ֆուտպոլի բաժակի մրցաշարքը, Հ.Ա.Տ.-ի «Հայր Պօղոս Արիս» մարզադաշտին վրայ: Մրցաշարքը կազմակերպուած էր իբրեւ նախապատրաստութիւն՝ 16 Նոյեմբերէն սկսեալ տեղի ունենալիք միջ-մասնաճիւղային ֆուտպոլի խումբերու ախոյեանութեան:

Հ.Ա.Տ.-ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբի նախկին մարզիկներէն եղբ. Աքօ Նէնէճեանի մահուան գուժէն ետք, Հ.Ա.Տ.-ի Լիքանանի Շրջանային Վարչութեան որոշումով մրցաշարքը կոչուեցաւ եղբոր անունով՝ ի յարգանս տարիներու իր վաստակին:



Մրցաշարքին բացումը կատարուեցաւ Շաբաթ, 2 Նոյեմբերի յետմիջօրէի ժամը 3-ին, Հ.Ա.Տ.-ի Պուրծ Համուտի եւ Պաուլըրիէի մասնաճիւղերու խումբերուն միջեւ տեղի ունեցած մրցումով:

Կազմակերպիչ յանձնախումբին անունով մրցաշարքին բացման խօսքը արտասանեց եղբ. Խաչիկ Պէրպէրեան, որ անդրադարձաւ Հ.Ա.Տ.-ի ֆուտպոլի-նեղբ. Նէնէճեանի ունեցած մեծ ներդրումին:

Մրցաշարքի բացման մրցումին ազդանշանը տրուեցաւ եղբ. Աքօ Նէնէճեանի եղբոր՝ Կիրակոս Նէնէճեանի կողմէ, ապա մրցաշարքը ընթացք առաւ:

Առաջին օրուան մրցումները պարզեցին հետեւեալ արդիւնքները.-

- Հ.Ա.Տ. Պուրծ Համուտ - Հ.Ա.Տ. Պաուլըրիէ 7-4
- Հ.Ա.Տ. Անթիլիաս - Հ.Ա.Տ. Ժրտէյտէ 5-2
- Երկրորդ օրը մրցումները շարունակուեցան հետեւեալ ձեւով.-
- Հ.Ա.Տ. Ռաուտա - Հ.Ա.Տ. Թրիփոլի 13-1
- Հ.Ա.Տ. Այնճար - Հ.Ա.Տ. Պէյրուլթ 3-2



ԿԻՍԱԽԱՐՏԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Հ.Մ.Ը.Մ. Պոլրճ Համուտ 5-2

Հ.Մ.Ը.Մ. Ռաուտա - Հ.Մ.Ը.Մ. Այն-ճար 3-1

Նախքան աւարտական մրցումը, Հ.Մ.Ը.Մ-ի ֆուտբոլի երկրորդական խումբերու յանձնախումբին խօսքը արտասանեց եղբ. Սերուժ Չամիչեան: Ան հաստատեց, որ «Յաղթող կամ պարտուող խումբ պիտի չըլլայ, որովհետեւ ինչ ալ ըլլայ մրցումին արդիւնքը, Հ.Մ.Ը.Մ-ն է յաղթականը»: Չամիչեան յայտնեց նաեւ, որ 16 Նոյեմբերին կը սկսի մասնաճիւղերու ֆուտբոլի խումբերուն յատկացուած ախոյեանութիւնը:

Ապա, ներկաները դիտեցին եղբ. Աբօ Նէնէճեանի ֆուտբոլի ասպարէզը ներկայացնող սահիկներ:



ԱԻԱՐՏԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Հ.Մ.Ը.Մ. Ռաուտա 2-1

Մրցումի աւարտին տեղի ունեցաւ մետալներու տուչութիւն: Մրցաշարքին երկրորդ հանդիսացած Ռաուտայի խումբի մարզիկներու մետալներուն տուչութիւնը կատարեց եղբ. Նէնէճեանի քոյրը՝ Լենա Նէնէճեան, իսկ Անթիլիասի մարզիկները իրենց մետալները ստացան ձեռամբ Կիրակոս Նէնէճեանի:

Աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան օրուան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան մրցաշարքին բաժակը յանձնեց մրցաշարքի ախոյեան խումբի՝ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի խմբապետ եղբ. Ալեքս Քէօսէեանի:

# ՆԱՀԱՏԱԿ ԵՒ ՆՆՋԵՑԵԱԼ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

## Թղթակից ՊՈՒՐՃ ԴԱՍՈՒՏ

Կիրակի, 17 Նոյեմբերին, յաւարտ Ս. Պատարագի, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ աւանդական դարձած հոգեհանգստեան արարողութիւն՝ ի յիշատակ մեզմէ յաւէտ հեռացած Հ.Մ.Ը.Մ.ականներու, որոնք իրենց կեանքին ընթացքին այս միութեան փորձեցին ծառայել առաւելագոյն կերպով եւ ամէնէն արդիւնաւէտ ձեւով: Տարեկան դրութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը յիշէ միութեան նահատակներն ու ննջեցեալները եւ յարգանքի տուրք կը մատուցանէ անոնց յիշատակին:

Հոգեհանգստեան պաշտօնին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը, Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, մասնաճիւղերու վարչութիւնները, Շրջանային Սկաուտ. Խորհուրդն ու Շրջանային խմբապետական կազմը, Կեդրոնական եւ Շրջանային նախկին վարչութիւններու անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի եւ անոր առաքելութեան մասին քարոզ մը խօսեցաւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան: Առաջնորդը անդրադարձաւ աշխարհասփիւռ այս միութեան տարած մեծ աշխատանքին՝ շեշտելով, որ շատ բան կ'ակնկալուի Հ.Մ.Ը.Մ-էն, յատկապէս հայ երիտասարդութիւնը իր շուրջ համախմբելու, զայն ազգային ոգիով թրծելու, հայկական արժէքներու նկատմամբ սէրն ու



photo by Ashnga©

յարգանքը ամրապնդելու եւ հայեցի դաստիարակութիւն ջամբելու իմաստով:

Շարունակելով, Առաջնորդը դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ հայը հայ կը մնայ, պայքար կը մղուի օտարամոլութեան դէմ, «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին հովանիին տակ հասակ կը նետեն այնպիսի սերունդներ, որոնք պատրաստակամ են շարունակելու իրենց նախորդներու սրբազան ուղին, հայրութեան անունը միշտ բարձր պահելու»:

Յետ հոգեհանգստեան պաշտօնին, եկեղեցւոյ դրան մուտքին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներն ու Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ընդունեցին ցաւակցութիւններ:



# ՆՈՒՐԻԵԱԼ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ՝ ԵՂԲ. ՊԱՐԳԵԻ ՊՕՇԿԵԶԷՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ՝  
ԵՂԲ. ՊԱՐԳԵԻ ՊՕՇԿԵԶԷՆԵԱՆԻ ԹԱՂՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)



**Հ.** Մ.Ը.Մ.ի Սուրիոյ մեծ ընտանիքը սրտի խոր կսկիծով կը գուժէ միութեան երկարամեայ ծառայող եւ նուիրեալ անդամներէն՝ եղբ. Պարգեւ Պօշկէզէնեանի մահը: Ազգային-միութենական մեր կեանքին նուիրուած եղբօր կորուստէն ետք, պարտք կը զգանք

անդրադառնալու անոր տարած աշխատանքներուն եւ գործունէութեան՝ յարգելու եւ անմար պահելու համար անոր յիշատակը:



Եղբ. Պարգեւի վերջին լուսանկարը, մահէն 10 օր առաջ:



Եղբ. Պարգեւ ծնած է Հալէպ, 1928 թուականին: Յաճախած է Ուսումնասիրաց վարժարանը: Փոքր տարիքէն ան եղած է Հ.Մ.Ը.Մ.ական գայլիկ, ապա՝ ըսկաուտ, ինչպէս նաեւ նուիրեալ գաղափարի ընկեր: Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական իր ծառայանուէր կեանքը շարունակելով ան ստանձնած է պատասխանատու զանազան պաշտօններ, դառնալով վարչութեան անդամ, ապա՝ ատենապետ: Հ.Մ.Ը.Մ.ի կողքին, եղբ. Պարգեւ իր ծառայութիւնը բերած է Ազգային իշխանութեան, ստանձնելով զանազան պաշտօններ: 16 տարի շարունակ ան ծառայած է Ազգ. Սահակեան վարժարանին, իբրեւ հոգաբարձու: Եղած է Ազգային իշխանութեան տնտեսականի եւ կալուածոց հոգաբարձութեան անդամ, Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ թաղական եւ Հայ Ծերանոցի խնամակալ: Ընտրուած է Բերոյ Թեմի Գաւառական Ժողովի անդամ: Իր վաստակին եւ նուիրեալ աշխատանքին առ ի գնահատանք՝ արժանացած է Բերոյ Թեմի եւ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշաններուն:



Եղբ. Պարգեւին Համար Հ.Մ.Ը.Մ.ը դարձած է իր ամէնէն սիրելի տունը: Իր ընտանեկան յարկին տակ ան տունը վերածած է փոքր ակումբի, գաւակներու հոգիներուն մէջ սերմանելով ազգային եւ միութենական գիտակցութիւն:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Ծրջանային Վարչութիւնը խոր ցաւով իր վերջին յարգանքը կ'ընծայէ եղբօր անմեռ յիշատակին եւ այս տխուր առիթով կ'ըսէ՝

Հողը թեթեւ գայ վրադ սիրելի՛ եղբ. Պարգեւ:



# ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ՝ ԵՂԲ. ԱԼԵՔՍԱՆ ԻՍԿԷՆՏԵՐԵԱՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ՝ ԵՂԲ. ԱԼԵՔՍԱՆ ԻՍԿԷՆՏԵՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՏԽՈՒՐ ԱՌԻԹՈՎ)

**Ե**ղբ. Ալեքսան Իսկէնտէրեան՝ բազմավաստակ դաստիարակ, օրինակելի ուսուցիչ եւ բարձր արժանիքներով օժտուած խմբապետ, մէկ խօսքով՝ տիրապար միութենականի եւ հայու օրինակ մը, որ երկարամեայ ծառայութեամբ դաստիարակած եւ պատրաստած է հարիւրաւոր խմբապետներ:

Եղբ. Ալեքսան Իսկէնտէրեան ծնած է Հալէպ, 1933-ին: Շատ փոքր տարիքէն կորսնցուցած է հայրը: Ազգ. Կիւլպէնկեան վարժարանէն նախնական ուսումը հազիւ ստացած՝ կը նետուի կեանքի ասպարէզ, ընտրելով երկաթագործութեան արհեստը, եւ տարիներու ընթացքին մասնագիտանալով կը հասնի փայլուն յաջողութիւններու:

13 տարեկանին կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ՝ Նոր Գիւղի կազմէն, եւ տարիներու ընթացքին աստիճանաբար կը բարձրանայ, ըլլալով «Կաքաւ» խումբի խմբապետ, ապա կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի Նոր Գիւղի կազմին պատասխանատուութիւնը, պաշտօն մը զոր տարիներով կը վարէ բժախնդրօրէն, անմիջական շփման մէջ ըլլալով մեծաթիւ պատանիներու եւ երիտասարդներու հետ, դրսեւորելով ղեկավարի իր արտասովոր կարողութիւնները եւ իր օգտակար ներդրումը ունենալով շրջանի երիտասարդութեան դաստիարակութեան եւ պատրաստութեան մէջ:


1970-ական թուականներուն, եղբ. Ալեքսանը կը տեսնենք Հալէպի Սկաուտ. Խորհուրդին մէջ, այնուհետեւ՝ ատենապետ, իսկ 1980-ականներուն Հ.Մ.Ը.Մ.ի վարչական, յետոյ՝ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամ եւ ատենապետ, հասնելով մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամակցութիւն:

Իր ներշնչումը եղբ. Նշան Թիւ յիւզեանէն առած ըլլալով, եղբ. Ալեքսան իր անդամակցած մարմիններուն մէջ եղած է կեդրոնական եւտիրական ղեկավար դէմք: Մեծ եղած է իր դերը Քեսապի էքիզօլուի Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրի հողաշերտին գնման եւ շէնքին կառուցման մէջ: Ան մեծ ճիգեր ի գործ դրած է ամէն տարի սովորութիւն դարձած Զատիկուան աւանդական տողանցքները կազմակերպելու համար:

1995-ին եղբ. Ալեքսան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի

Պատգամաւորական 6-րդ Ընդհանուր ժողովին, Լիբանանի մէջ: 1993-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Միսաք Արզումանեանի ձեռամբ ան կը ստանայ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշան:

Հ.Մ.Ը.Մ.ի կողքին, եղբ. Ալեքսան Իսկէնտէրեան միշտ ներկայ









# ԵՂԲ. ԽՈՐԷՆ ՔԻՐԱԶԵԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ

**1** Նոյեմբեր 2013-ին, Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ իր մահկանացուն կնքեց հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Խորէն Քիրազեան: Եղբայր մը, որ իր կարեւոր ներդրումը ունեցաւ յետ-համայնաւարական Պուլկարիոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ական շարժումի վերականգնման եւ վերակազմակերպման գործին:

Եղբ. Խորէնծնած է 1922-ին, Պազարճիք: Ծնողները նոյն տարին իսկ փոխադրուած են Փլովտիվ, ուր ան նախակրթութիւնը ստացած է միսիթարեաններու տեղւոյն վարժարանը:

1939-ին, եղբ. Խորէն կ'աւարտէ Փլովտիվի առեւտրական հիմնարկը եւ 1940-ին կը փոխադրուի Սոֆիա, ուր 55 տարի կը պաշտօնավարէ վաճառականական մեծ հաստատութեան մը մէջ: 1943-1945 ան կը զինուորագրուի պուլկարական բանակին եւ կը մասնակցի Բ. Աշխարհամարտի կռիւներուն: Կը մեկնի մինչեւ Քոստովո եւ ողիսական պայմաններու մէջ քալելով կը վերադառնայ Փլովտիվ:

1950-ին ան կը պսակուի եւ կը բախտաւորուի երկու մանչ զաւակով:

Եղբ. Խորէնմանկութենէն կը դաստիարակուի Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական իտէալներով եւ Գարեգին Նժդեհի հայրենասիրական շունչով: Կը կրէ ազդեցութիւնը Պուլկարիոյ 1930-ական տարիներու ազգային ականաւոր դէմքերուն՝ Ներսէս Աստուածատուրեանին, Օննիկ Փանիկեան-Չարմունիին, Յովհաննէս Տէվէճեանին, Հայկ Ասատուրին եւ Կարօ Ղազարոսեանին:

1931-ին, Հ.Մ.Ը.Մ.ական վարչական իր երէց եղբոր օրինակին հետեւելով, եղբ. Խորէն կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ին, իբրեւ գայլիկ եւ ապա՝ սկաուտ: 1940-ին, Սոֆիա հաստատուելէ ետք, եղբ. Արթօ Յարութիւնեանի հետ ան կը վերականգնէ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն տկարացած մասնաճիւղը: 1931-1944, մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի խափանումը Պուլկարիոյ մէջ, ան կը մասնակցի սկաուտական միջ-մասնաճիւղային գլխաւոր ձեռնարկներուն եւ բանակումներուն:

1991-ին, համայնավար կարգերու քայքայումէն եւ Պուլկարիոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի վերընձիւղումէն ետք, եղբ. Խորէն կը ստանձնէ Սոֆիայի մասնաճիւղին ատենապետու-



թիւնը: Միաժամանակ, ան կեղրոնական դէմքն ու մղիչ ուժը կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ մնացեալ մասնաճիւղերուն վերականգնման եւ վերակազմակերպման աշխատանքներուն: Երկար տարիներ ան կ'աշխատակցի միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին:

Եղբ. Խորէն կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Զ. եւ Է. Պատգամաւորական ժողովներուն: Է. Պատգամաւորական ժողովի նախօրեակին, Պէյրութ, ան Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան կողմէ կը պարգեւատրուի միութեան «Արտակարգ» պատուանշանով:

Եղբ. Խորէն պաշտամունքի աստիճանի հասնող սէր ու յարգանք ունէր Հ.Մ.Ը.Մ.ի հանդէս: Հ.Մ.Ը.Մ.ը կեանքին իմաստն էր: «Մարզիկ»ին տրուած հարցազրոյցի մը մէջ («Մարզիկ» թիւ 206, էջ 16-20) ան նոր սերունդին կը յորդորէր Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցիլ, որովհետեւ «Հ.Մ.Ը.Մ.ը զիրենք կը պաշտպանէ դուրսի վտանգներէն, մոլութիւններէն եւ աղանդներէն: Հ.Մ.Ը.Մ.ի մէջ մեր զաւակները կը սորվին բնութեան մէջ ապրիլ, բնութիւնը վայելել եւ պահել: Իսկ ամէնէն կարեւորը, Հ.Մ.Ը.Մ.ի մէջ անոնք հայ կը մնան ու հայ կը մեծնան», կը հաստատէր ան:

Մեծ է եղբ. Խորէնի դերը համայնավար խորշակին զոհ գացած պուլկարահայերու յիշատակին յաւերժացման մէջ: Ան բազմաթիւ գրութիւններով վկայակոչած եւ յիշատակած է 1944-ին համայնավար իշխանութիւններու հալածանքներուն զոհ գացած պուլկարահայերուն յիշատակը: «Մարզիկ»ի էջերէն ան հանդէս եկած է այդ զոհերը (եօթն Հ.Մ.Ը.Մ.ական) ոգեկոչող հարուստ յուշերով:

Մինչեւ խոր ծերութիւն եղբ. Խորէն եղաւ ու մնաց Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական արժէքներուն եւ կազմակերպական աւանդներուն արթուն պահապանը Պուլկարիոյ մէջ:

Հանգիստ իր յոգնարեկ մարմնին, յարգանք միութեան կան իր գործին ու յիշատակին:





## ԳԼԽԱՆՐԿԸ

### Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան ՊԵՅՐՈՒԹ

**Գ**լխարկը առաջին անգամ գործածած են եգիպտացիները եւ հռոմէացիները: Ք.Ա. 3200-ին եգիպտացի տղամարդիկը իրենց գլուխը ծածկեցին թռչունի փետուրներով, իսկ փարաւոնները իրենց գլուխին դրին թագերու եւ շինծու մագերու անցուած կտաւներ:

Մինոսները, որոնք կրետէ կղզիի բնակիչներն էին, ունէին սրածեւ գլխարկներ:

Հին Յունաստանի մէջ գլխարկ կը կրէին միայն աղքատները: Իսկ հին հռոմէական կայսրութեան ժամանակ՝ միայն հարուստները:

**ԺԱ.** դարուն կանայք իրենց գլուխները կը ծածկէին շղարշով:

Արեւելեան երկիրներու մէջ կիները իրենց մագերը կը զարդարէին փայլուն եւ գունաւոր քարերով:

**ԺԶ.** դարուն սպանացի ասպետներ շէովալիէ գործածեցին, «Սոմպրերո»

կոչուած գլխարկներ, որոնք զարդարուած էին թռչունի փետուրներով:

**ԺԸ.** դարուն Ֆրանսացիները, անգլիացիները եւ իտալացիները սկսան գործածել շինծու մագեր, որոնք կը կոչուէին կեղծամ:

**ԺԹ.** դարուն Փանամայի մէջ շինուեցան «Փանամա» կոչուող գլխարկներ, որոնք տարածուեցան ամբողջ եւրոպայի մէջ: Այս գլխարկները ընտիր խսիրներէ կը հիւսուէին, շատ դիմացկուն էին մանաւանդ տաքութեան դէմ:

Քսաներորդ դարուն, այրերու մօտ կը տեսնենք «Մելոն» եւ «Ֆէոթր» գլխարկի տեսակներ, որոնք շինուած էին նապաստակի ստեւէն: Իսկ կիները հետզհետէ կը հեռանան զարդարուն եւ աչքառու գլխարկներէ:

Ներկայիս կը գործածուին տեսակաւոր գլխարկներ հովէն, ցուրտէն, անձրեւներէն եւ արեւէն պաշտպանելու համար:



## ԹՈՒՐԻՆՁԸ



**Թ**ուրինջը մշտադալար, ջերմասէր բոյս մըն է: Ան կ'աճի արեւադարձային գօտիներումէջ: Իւրաքանչիւր ծառ կու տայ 200-300 պտուղ: Կը հասունանայ Դեկտեմբեր ամսուն, բայց օգտակար յատկութիւնները կը պահպանէ մինչեւ Յունիս: Ան անգլերէնէն կը թարգմանուի «խաղողային պտուղ», սակայն իր համը խաղողի նման չէ: Աւելի օգտակար է կարմիր թուրինջը: Եթէ թուրինջը ճիշդ ուտենք դառնահամութիւն չենք զգար: Զայն պէտք է ուտել դգալով, հորիզոնական կիսելով: Միջնորմներու թաղանթն է որ դառնահամութեան պատճառ կը դառնայ:








# ԿԱՐԱՊՆԵՐ



**Կ**արապները գեղեցիկ, խոշոր եւ ուժեղ թռչուններ են: Անոնց մարմնին երկարութիւնը մինչեւ 180 սմ. կը հասնի: Ունին փարթամ եւ խիտ փետուրներ, երկար պարանոց: Յայտնի է կարապներու ճ տեսակ: Կարապները աւելի գեղեցիկ են խուլ անտառի մենաւոր լիճերուն մէջ: Անոնք թեթեւ ու անաղմուկ կը սահին ջուրին


վրայ, եւ ջուրը կը ստանայ սատափի երանգ: Կարապները բացառիկ զգայուն եւ զգուշաւոր թռչուններ են եւ բոյն կը դնեն մեկուսի լճակներու անմատչելի եղէգնուտներուն մէջ, նաեւ դիւրութեամբ կ'ընտելանան անազատ պայմաններու: Ճուտիկներու դաստիարակութեամբ կը զբաղին թէ՛ արուն եւ թէ՛ էգը: Ճերմակ կարապները արագ կ'ընտելանան նոր պայմաններու: Կենդանաբանական պարտէզներուն մէջ ճերմակ կարապները համերաչխ կ'ապրին Աւրստրալիայէն բերուած «հիւր» սեւ կարապներու հետ:

Կարապները ամէնէն գեղեցիկ ու մարդոց համար ամէնէն սիրելի թռչուններէն մէկն են: Կարապներու մասին յօրինուած են բազմաթիւ հէքիաթներ, բանաստեղծութիւններ եւ երաժշտական ստեղծագործութիւններ:



## ԳԻՏԷԻՔ ՈՐ...


1891 թուականին, անգլիացի ֆուլթպոլի մասնագէտ Ճոն Փենալթիի առաջարկով, ֆուլթպոլի մէջ որդեգրուեցաւ կանոն մը, ըստ որուն՝ սեփական մեծ քառակուսիին մէջ կոպիտ խոշտանգումի պարագային պէտք է կատարուի 11 մեթրնոց ազատ հարուած: Այդ հարուածը զայն մտայղացողին անունով կը կոչուի Փենալթի:



## ՀԱՆՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:  
Կը թռչի, հաւ չէ:  
Կը լողայ, նաւ չէ:  
Կ'երգէ այն ժամուն,

Երբ շատ մօտ է իր մահուան:  
(Պատասխանը՝ յաջորդիւ: Թիւ 367-ի հանելուկին պատասխանն էր հովանոց):





## Տարբեր Յայեացքով



Էլի Յուլիշեան

## ՍՈՒՏՈՔՈՒ

|   |   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|---|
|   | 8 |   |   | 5 |   | 3 |   |
| 4 | 2 |   |   |   |   | 6 | 5 |
|   | 5 |   | 1 |   | 9 |   | 4 |
|   |   | 5 |   |   |   | 4 |   |
| 2 |   |   | 5 | 6 | 1 |   | 3 |
|   |   | 3 |   |   |   | 1 |   |
|   | 4 |   | 8 |   | 7 |   | 1 |
| 9 | 6 |   |   |   |   |   | 8 |
|   | 3 |   |   | 9 |   |   | 7 |

Յորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Պատասխանը՝ յաջորդիւ

### Նախորդին լուծումը

|   |   |   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 3 | 8 | 1 | 5 | 6 | 4 | 9 | 2 |
| 4 | 1 | 9 | 2 | 8 | 7 | 3 | 6 | 5 |
| 2 | 5 | 6 | 3 | 9 | 4 | 7 | 8 | 1 |
| 5 | 6 | 4 | 7 | 1 | 3 | 9 | 2 | 8 |
| 8 | 9 | 7 | 5 | 4 | 2 | 1 | 3 | 6 |
| 3 | 2 | 1 | 9 | 6 | 8 | 5 | 7 | 4 |
| 9 | 8 | 3 | 4 | 2 | 5 | 6 | 1 | 7 |
| 6 | 7 | 5 | 8 | 3 | 1 | 2 | 4 | 9 |
| 1 | 4 | 2 | 6 | 7 | 9 | 8 | 5 | 3 |




1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

### ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

1. Անգլիոյ ֆուտպոլի կազմերէն:
2. Կապոց, ծրար - Սաստիկ տենչալ:
3. Փոքրացնող մասնիկ - Դեռ չբացուած ծաղիկ - Մտածում:
4. Հանդերձարան - Թողութիւն շնորհէ:
5. Ստացական ածական - Սկահակ - Այրող:
6. Ոչխարի ճարպոտ պոչ - Անասունի կուզ:
7. Նաւահանգիստ՝ Կասպից ծովու ափին - Կութ:
8. Ստացական ածական - Շարժական գոյք:
9. Մահմետական - Յաճախ:
10. Պարտիզայանի գործիք - Լեռնայիրանանի օդափոխութեան վայրերէն - Արական օտար անուն - Կաթնահամ հատիկներով ցորենի հասկ:
11. Սկսելով - Գրաբար՝ եղի՛ր - Կարճահասակ:
12. Զոյգ - Խօսելու գործարան - Կողմ:
13. Մեծարանք, յարգանք - Խայթող:
14. Սեմական դից - Ռուսերէն՝ այո՛ - Այբուբենէն:
15. Սիամանթոյի ծննդավայրը - Պայծառ եւ ցուրտ օդ:
16. Կրկնուած բաղաձայններ - Սանձ - Զայնանիչ:
17. Ռուս թենիսփումըն - Ելեկտրական միաւոր:
18. «Վէրք Հայաստանի» վէպին գլխաւոր հերոսը - Փոքրացնող մասնիկ - Հնդկական դիցաբանութենէն:
19. Վայրի արու ոչխար - Բազմիլ - Օգնութիւն:
20. Արեւմտեան զինուորական ուխտ - Հանքային համեմ - Արեւելեան Եփրատ:

### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ

1. Արժանթինահայ թենիսմէն:
2. Ստացական դերանուն - Թայլանտ՝ նախապէս - Հինտու կրակի աստուածը - Այբուբենէն:
3. Մանրոջիլ - Անմշակ տարածք - Ֆրանսական քաղաք:
4. Բերան փոթոթող համ - Ընդունարան - Արտասուել - Դագաղ:
5. Գորշագոյն մետաղ - Յարդախառն շաղախ - Իգական անուն:
6. Իրերայաջորդ տառեր - Մէկտեղում - «Ֆորմիլա 1»-ի պրագիլցի մրցավարորդ:
7. Անբաւարար - Եզիպտահայ մամուլէն - Դոյլ:
8. Արական օտար անուն - Դիմացի՛ր:
9. Կէս՝ թոյլ - Վայրի սալոր - Զուիցերիական ժամացոյցներու վաճառանիչ մը:
10. Փիւնիկեան դից - Կրկնեփ - Կանաչ լուբիա:
11. Սեպ - Սաստիկ սիրահարիլ - Եւրոպական հրթիռներու տիպ - Յուցական ածական:
12. Դրկից գիրեր - Լայզա Մինելլի Ֆիլմերէն - Շիրվանգաղէի երկերէն՝ «... Իրաւունք» - Ժողովրդական ասոյթ:
13. Ռահվիրայ, առաջնորդ - Իգական օտար անուն:
14. Կակազ - Արարական սուլթանութիւն:
15. Ծովասպատակ - Յովակեաց - Էգ թռչուն:



ԹԻՒ 210 ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒՑՈՒՄԸ

